

ԴԻՍՇԵԿ

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԿԱՆ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

1906

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ծ Ի Ր Ա Ն Ա Կ Ի Ր Խ Ր Տ Ի Ի Լ Ա Կ Ը

Ճառերը հոսում են հեղեղի նման, ծրագրերները բազմատեսակ ու բազմաթիւ. հուետորների թիւը անվերջ: Ամենակարող՝ խօսքով, անկար՝ գործով:

Պետական գուման է այդ:

Գրքուած ցարի ներկայացուցիչների ամբարտաւան յամուռութեամբ, վիրաւորած՝ իրենց աշկարայ անղօրութեան փաստով, խղճահար այն անվերջ ցաւերի դիմաց, որոնց միջից ծնեց ինքը դուժման, յեղափոխական երկունքի այդ անդրանիկ, բայց կիսակալով՝ մանկիկը, պատգամաւորները շարունակում են փրփրալ բորբոքելի շարունակում են խօսել աւելի խիստ շեշտով, աւելի թուճգ ոճով...

Ծաղր և նախատինք մինիստրների երեսին, որոնք մի-մի անգամ՝ ինչպէս երկչոտ նապաստակներ՝ ցոյց են տալիս իրենց գլուխները կառավարչական աննախանձ օթեակում. բուռն յանդիմանութիւն թուլակամ և չսփուռը ընկերների հասցէին. գերագոյն յափշտակութեան հասած ներբողներ աղատութեան գործին. անվերջ, անծայր յոյսեր գիւղացիութեան, բանւորութեան, բոլոր տանջածներին, և ի լրումն՝ պատանեկան յոյզով կրկնող ծափեր ու բացականչութիւններ, նոյնքան առատ, որքան ժողովրդի ցաւը, նոյնքան բուռն, որքան պատգամաւորների իղձերը...

Սիրում ենք հաւատալ նրանց բարեմտութեանը, միակ արդարացումը՝ անղօր դուժմալի, որին, ով փոտէ, գուցէ, այլ բան չէ վիճակված, բայց եթէ խօսել բողոքի կոչեր արձակել, լսելի գարձնել ցարերի երկրից վաղուց հալածական եղած տարրական ճշմարտութիւնները, և գէթ մի բանի ամիս՝ հրապարակով Տաւրիկեան պալատի «օրինական» շինութեան մէջ ներբող կարգաւ ազատութեան մարտիկներին, սովատանջ աշխատաւորութեան, արգելած բաւերին ու շլթայակապ ազատութեան: Սակայն մի էական պայմանով միայն — սակ ամբողջ ճշմարտութիւնը, մերկայանել բեթիմը իր ամբողջ կազմովը, և առանց դիւանափոխական որեւէ վերապահութեան՝ մատը դնել այն բոլոր անձերի ու պատճառների վրայ, որոնք աղբիւր են մեր ընդհանուր դժբախտութեան, այսբան վշտի ու սրեան, համառուսական անծայր տանջանքների...

Եւ այդ է, որ պակասում է:

Յանցագործներին մատանիչ անող ձեռքը, ցաւ է ստել, չէ բարձրանում ամբողջ ոյժով, պատգամաւորական փտակից մի ժողովին պատիւ բերող համարձակութեամբ: Հարւածը թերի է, յետախուզութիւնը չաւարտած: Նշանակէտը մնում է միշտ նոյնը — Գ օր բ Ե ի կ ի ն, ճկուն և անբերս մի ծառայ. Տր Ե պ օ վ ստտեղազարբ մի ոճրագործ, քանի մի մանկակիներ պալատական շրջանից, և մի խուճք արկածախնդիրներ՝ վարչական աշխարհում...

Բայց նա, որ սրբագործումն է ամբողջ բունպետութեան, թագն ու պակը բոլոր չարիքների, և այն պալատը, ուր ապաստան է գտել ոճիրի բովանդակ ուղմախուճքը, դրւած մեծ իշխանների և իշխանուհիների հովանու ներքոյ, տէր և հրամայող բոլոր մանր ու նքն եր ի,—մնում է խնայած, անխոթելի, ազատ յարձակումներից, անմատչելի արգար քննադատութեան, շրջապատած յլեհասպետի անձեռնմխելութեան՝ քնաբեր ու դատարկ բանաձեւով...

Վ Ե հ Ե պ Ե տ Ե,—մի խրտուիլակ, գլխին թագ ու մէջքին ծիրանի, այլասեռւած մտքով ու մարմնով վախկոտ՝ ինչպէս նապաստակ, փոփոխամիտ՝ որպէս հողմահար, փառասէր՝ իր ոչնչութեան մէջ, յանդուգն՝ ճառեր կարգալիս, լալկան՝ գործի ժամանակ:

Պ ա լ ա տ Ե,—սրբագործւած ապաստանը թափթիւռկ տոհմի, որ չէ ստեղծագործում, այլ ապականում է, մեծագոյն աւաղականոցը ամբողջ կայսրութեան, փրկելութեան խարխալը բոլոր նրանց, որոնք յղփանում են առանց աշխատելու, գողանում են՝ առանց պատժի հրամայում են՝ առանց գլխի և սրտի. հնոցը ապականութեան, մահարձանը՝ ազատութեան:

Մ Ե Ծ ի շ խ ան ն Ե ր,—մեծ՝ տիտղոսով, պատիկ արժէքով, շարագործութեան մէջ ընդունակ՝ ինչպէս Վ լ ա գ ի մ ի ր, գործաւնութեան մէջ անկար՝ ինչպէս Ն ի կ օ յ ա յ, ձրիակեր՝ պետական գանձարանում, դուռձան՝ ազատութեան գործի մէջ. զեղխարար ու շայտ, մարդակեր ու արիւնստարաւ...

Եւ այդ ամբողջ մրուրն ու չարիքը՝ ազատ յարձակումներից, խնայած դուժմայական մերկայնող ճառերի մէջ, դուրս՝ «հասարակ մահկանացուների» բնական հայեացքից, որպէս զի այդ ճառերին ականջ դնող ամբոխը շարունակի մրափել այն սպանիչ մոլորութեան

մէջ թէ «ցարը՝ աստուածային փոխանորդ է», նրա «պալատը՝ տաճարների տաճար», ու «ըրջպատողները՝ աստուածութեան սպասուորները» — դարևոր խաբբայութիւն, որ մայրն է մեր տանջանքի, մեր բաղաբական յաշմանգամութեան, ծնողը՝ ժողովրդական այսքան ոճիրները...

«Քաղաքական փափկանկատութեան թելադրութիւնն է այդ» — ասում են զգուշաւորները՝ դումայում և դումայից դուրս: Անօգուտ, աննպատակ, անմիտ փափկանկատութիւն, որ ոչ բռնաւորների սիրտը պիտի մեղմացնէ և ոչ էլ դիմադրական պահանջների աջողութեան պիտի նպաստէ: Փաստերը հրապարակի վրայ են: — Ամենիստեան մերժեց: Մինիստրութիւնը հրաժարական չէ տալիս: Մահաւան պատիժը կանգուն է: Հողային ծրագիրը ոտնահարւած: Եւ ճիշտ այն միջոցին, երբ դումայի կուլուարների մէջ ուղերձներ են պատրաստուում յանուն ցարի — ժողովրդի հօր, բանտերը լքուում են նոր կաշանաւորներով, կախաղանները տասնապատկուում են, կառավարչական խուլիգանութիւնը նորից սրում է ժանիքները, արիւնը յորձանք է տալիս, Լոճին յաջորդում է Վարչական, Վիշինեովին՝ Բելոստոկ, Նախիջևանին՝ Վարանդա...

Էրնէկ մենք սխալւած լինէինք: Էրնէկ թէ անգրանիկ դումայի դիւանագիտական զգուշաւորութիւնը, այդ ակամայ յարգանքն ու լուութիւնը ծիրանակիր խրտուիլակի և նրա վոհմակի դիմաց՝ կանգնեցնէր արեան հոսանքը, սահման՝ դնէր այս չը տեսնւած կրակին, որ մաղուում է ահագին պետութեան վրայ, ինչպէս համաժողովրդական պատիժ: Սակայն, աւա՛ղ, սխալը յեղափոխական անվերապահ մտածողութեան մէջ չէ, այլ հակառակ կողմը...

Եւ գուցէ երբէք և ոչ մի ժամանակ վերապահութեան պոլիտիկը այնքան կորստաբեր չէր կարող լինել, ինչպէս այժմ, երբ ամբողջ երկիրը, բոլորքուած յեղափոխական տրամադրութեամբ, ուզում է վերջնականապէս ճանաչել ամբողջ չարիքը և բոլոր չարագործներին, երբ անհրաժեշտօրէն հարկաւոր է վրձնական ու անվրէպ հարւածով կտրել այն թողկերը, որոնք կապում են տանջւած ժողովուրդին անհոգ արքունիքին և պատգամաւորական ժողովի մատը ուղղել դէպի այն գլուխը, որ բոլոր ոճիրների գլուխն է և որի վրայ պիտի ընկնի պատասխանատուութիւնների ծանրագոյն մասը:

Խնայելը՝ խաբել կը նշանակէ:

Ամբողջ տոհմը բոմանօյների, այլասեւուած և անբարոյական, ամենաբարձրագիր ներկայացուցիչը այդ տան մի ծիրանակիր խրտուիլակ, որ մի ձեռքով առլիս է, երկու ձեռքով յետ խլում — արժանի չեն յարգանքի, խնայման, վերապահութեան: Նրանք երբէք չեն իմացել յարգանքին յարգանքով պատասխանել, ասպետութեան՝ ասպետութեամբ: Քանի հարիւր տարի է ար-

դէն՝ ջուր ուզողին լեզի տւեցին, հաց ուզողին՝ քար ուղերձներին՝ մտրակով պատասխանեցին, որդիական աղերսներին՝ սւիններով: Ժողովրդական աշխատանքով կառուցւած պալատը դարձրին մեծագոյն աւազականոց, ամբողջ երկիրը՝ համատարած բանտ...

Գարձեալ պէ՞տք է խնայել:

Ոչ և հազար անգամ ոչ: Խնայման բաղաբականութիւնը չի փրկի կացութիւնը, չի ազատի սրտատրոփ դուման բռնապետութեան հարւածներից: Այսօր դումայի մի ձայնաւորի վոնդումն է պահանջում — և դա փաստ է արդէն, — վաղը կը պահանջի ամբողջ խմբերին — և նշանները երևում են, — միւս օրը կը հնչէ վերջին երգը — լուծման բարձրագոյն հրամանը, վերջին գործողութիւնը պալատական դաւադրութեան:

Սւիններով կը պատեն համաուսական անգրանիկ բողոքարանը, և կը հրամայեն «անձեռնմխելի» պատգամաւորներին 24 ժամում իրենց տները դառնալ:

— «Ի՞նչ ասացիք Պետերբուրգում» — պիտի հարցնեն ընտրողները, անհամբեր և սրտաբեկ:

— Ամբողջ ճշմարտութիւնը...

Լոկ պատւի խնդիր չէ այդ, այլ ցաւատանջ ժողովրդների անխօս, լուակեաց, բայց սրբազան կտակը, աւանդւած իր ընտրեալներին ոչ թէ մեռած քէններով ու թղթով, այլ աղի արտասուքով ու արեամբ...

Ցեշեցէք այդ, դուք ամենամեծ և ամենափքախտ երկրի անգրանիկ պատգամաւորներ, թափ տւէք ձեզանից փոշին վերապահութեան և գերազանց մի յափշտակութեամբ՝ ուղղեցէք ձեր մատը դէպի մեծագոյն պատասխանատուն, դէպի ոճրագործութեան գլխաւոր ապարանքը: Յոյց տւէք 150 միլիոն ժողովրդին այն խրտուիլակը, որ ծիրանի է կրում, և այն եղեւնը՝ որ գահին է յենւած: Ասացէք ամբողջ ճշմարտութիւնը:

Յեղափոխութեան պահանջն է այդ:

«Գ Ր Օ Շ Ա Կ Ի» Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻՆ)

ԹԻՖԼԻՍ, յունիսի 10

Երևանը մորից հայ-թրքական ընդհարումների րեմդարձաւ: Դէպքը տեղի ունեցաւ յունիսի 9-ին, քաղաքի հրապարակում: Առիթը, ըստ երևոյթի մի ամեջամ դէպք էր — կոխ երկու թուրքերի մէջ: Կողմը ամմիջապէս կերպարանափոխուեց ընդհանուր հրացանաձգութեամբ և իրարամեցան: Հայերը բոլորովին չէին սպասում և այդ պատճառով շատ զոհեր տւեցին: Հայերից սպանւած են 29, թուրքերից 4: Սպանւած են մոյմպէս 2 վրացի, 2 մոլօկան և 1 հրէայ: Վիւաւորները թիւը 20-ից աւելի է: Ոստիկանութիւնը, ինչպէս միշտ, ամգործ է և երկղմի: Հակողութիւն է մշահակւած մի քանի տների վրայ: Երևանի դէպքի պատճառով շրջակայքներում մկատուում է յուզմունք: Սուրմալուի զուաւոր համգիստ է:

ԹԻՖԼԻՍ, յուժիսի 14

Կառավարական խուլիզանութիւնը բարձրացնում է իր գլուխը: Թիֆլիսում դէպքերը սուր կերպարանք են ստանում: Ոստիկանութիւնը եռանդով նպաստում է քաղաքի անապահովութեամբ և անվերջ սպանութիւններին: Գործադուլի նշանները զօրեղանում են: Խուզարկութիւնները այնքան շատացել են, որ ոստիկանական պաշտօնեաները այլ գործով զբաղելու ֆիզիքական հնար չ'ունին: Ընդհանուր համոզումն է, որ ամհրաժեշտ է հիմնական փոփոխութիւն՝ ամբողջ վարչութեան մէջ, խաղաղութիւն վերահաստատելու համար: Փոխարքայի թուլութիւնը վրդովիչ է: Պաշտօնեաները դարձել են անասնօ իրենց ապօրինութիւնների մէջ:

ԹԻՖԼԻՍ, յուժիսի 18

Թիւրքաց հայաստանից տխուր լուրեր են հասնում: Էրզրումի թիւրքերի շարժման վրէժը սուլթանը հայերից է ուզում առնել: Քաղաքի հայ բնակչութիւնը անհամբեր սպասում է: Աւելի ծանր է վիճակը Մուշի շրջանում: Տուրքերի առիթով սկսած խտուրթիւնները Վանի վիլայէթում՝ հասել են չ'եղած չափերի: Կենդանոցից հրահանգ է ուղարկւած Վանի փաշայիմ անխնայ լինել դէպի հայերը: Վասպուրականից գաղթող հայերի թիւը օրէցօր շատանում է:

Գ Է Պ Ի Գ Ո Ր Ծ

Ներկայ կրակոս յօլածը, գրած «Իրօսակի» համար, մի նոր արտայայտութիւն է այն ժեսած համակրութեան, որ գերմանուհի սաղանդատոր գողի՝ Տիկին Ֆրայանի՝ քէ կօմիտրանսերով եւ քէ գրչով յանախ ցոյց է սել հայկական դասին, եւ որի երկու գրոյկները՝ «Հայկական հարցը» եւ «Հայերն ու ցարիզմը» այդ դասի ջերմ պաշտպանութիւնն են գերմանական հասարակութեան առաջ:

Այս պահուս, երբ ուսու կառավարութիւնը—այդ ձիրանագէն գարշելի կողմաբեկը, որ վայրագօրէն մարդկային գլուխներ կը ջարդէ՝ անոնց ուղեղները ճզմելու—ամբողջ աշխարհէն խայտառակ մահաւան դատապարտուած՝ կը պատրաստուի կորսելու, նոյն պահուն այդ օրհասական հրէշը, որուն ոճրալից գոյութիւնը պէտք էր կործանէր ուսական բաւտիլի—Շլիսէլբուրգի անկումով, դեռ ոյժ ունի Կովկասի մէջ նոր վայրագութիւն ստեղծելու, վերագործ մը 1905-ի արիւնտտ օրերուն:

Վերոնի մէջ տկարացած, ճակատագրական և ստորերկրեայ ոյժերը կը ջանան բուն դնել լայնածաւալ կայսրութեան այլ մասերուն մէջ՝ հազարաոր անմեղներ մահացնելով: Սակայն հայերը բաւական խրատուած են՝ Անոնք վաղուց ծանօթ են ուսու կառավարութեան եղեռնական դիտաւորութիւններուն, ինչպէս և անոր, որը փերագոյն հեղեղութեամբ մը Տրապուզուեցաւ ինքզինք փիզիքական խաղաղութեան օգոստափառ առաքեալը անանելու: Ինչ եպերելի կատակ: Նոյն կեղծաւոր առաքեալը չէր միթէ, որ 1903-ին մահացու հարածը տաւ հայ եկեղեցիին— դժբախտ ժողովրդի պատմական սրբավայրին, որ քրիստոնէական գաղափարի առաջին մարտիրոսները տաւ էր աշխարհին: Նի-

կօլա Բօմանօֆն է այդ, որ իր մեծ-հաւատարմիչ Պօբէ-դօնէսցեվէն առաջնորդուած՝ տաւ հարեւոյ մը, որ չէր փորձած նոյնիսկ Աբդուլ-Համիդը:

Չը կար սիրտ մը, որ չը զգացէր: Անլուր հարեւոյ մը վշտացուց թէ՛ ազատ-մտածողները, թէ՛ հաւատացողները, թէ՛ գիտունները և թէ՛ տգէտները, ամենահարուստները, ինչպէս և աղքատները:

Եւ հակահարեւոյ չ'ուշացու երևան գալ: Եթէ Նիկօլա կ'ուզէր հայերը յեղափոխական դարձնել՝ վերջը յեղափոխականութեան մէջ մեղաւորելու նպատակով,— իր գործիքը լաւ էր ընտրած: Ապստամբ սրտերը՝ իրենց արդար բարկութեան սէջ՝ անվախօրէն կ'արտայայտէին: Բռնապետներուն դուր եկող գերեզմանական խուլ լուրութիւնը՝ հոգ ընդհատեցաւ անզուսպ աղաղակներով: Եւ հասարակ վայրկեանը հոսած կը նկատէր, նմանելու սահմանէն անդին գանձող Մեծ-Մարդասպանին, նորագոյն ժամանակներու այդ ամենագարշելի արարածին:

«Խաղաղութեան առաքեալը» ցեղերու և ազգերու ներքին կուռի նշանը տաւ, նորահար միջոցը՝ ամբողջ պատասխանատուութենէ ազատելու համար: Բայց ասիկա աւելի դժուար էր Կովկասի մէջ քան Թիւրքիա: Բագլի, Բալխանիի ու Բաթումի նաւթային խոշոր արդիւնաբերութեան զարգացման հետ միասին՝ սօցիալիստական գաղափարներ այլ մուտք էին գործած և կը սպառնային, մարդկային համերաշխութեան նոր աւետարանով, միացնել հայ և թուրք բանւորները: Մարդկային համերաշխութիւն, — սարսափելի նշանախօս բռնապետութեան համար:

Քրիստոնեայ և մահմեդական բանւոր ու բանւորութիւններուն գործադուլը, կազմակերպուած 1902-ին, մինչև այն ատեն աննախընթաց համերաշխութեան օրինակը տաւ աշխարհին: Հանդես չ'եկաւ ոչ մի դաւաճան, ոչ մի խանգարիչ: Եւ այդ՝ սօցիալիզմի ձեռակերան էր Կովկասի մէջ, խաղաղութեան հրաշալի պատկերը, ապագայի տեսիլքը, որ հայ բանաստեղծները երազեր էին այնքան յափշտակութեամբ:

Սակայն, արտօս, ահա 1905-ը՝ «մեղալի» միւս երեսով: Թուրքերը, երէկան ընկերները, կը նետուին իրենց քրիստոնեայ բարեկամներուն վրայ, կը սպաննեն, կ'այրեն և կը կողոպտեն. կիներու և երեխաներու վրայ ի գործ կը դնեն այն ամեն նրբացած վայրագութիւնները, որոնք կը կրէին դրօշմը հայկական մեծութիւնները, որոնք կը կրէին անունը ընդմիշտ նշաւակեց: Ահա անըմբռնելի մի փոփոխութիւն: Ահա Նիկօլա 11-ի և իր արբանեակներու գործը, թշուառականի գործ, որ իր փլչող գահը դժբախտ հպատակներու արիւնով կ'ուզէ ամրացնել:

Ո՛վ դու, Նիկօլա Բօմանօվ, ստախօս գահակալ, դու որ ջլատուած անգամներուդ ոյժ տալու համար արեան մէջ կը լողաս՝ ինչպէս առաւօտեան ցօղի մէջ մենք քեզ կը մեղադրենք մարդկութեան դատարանի առջև: Գու քեզ ինքնակալ կ'անանես, բայց աւելի թշուառական ես քան վերջին ստրուկը: Գու քեզ ժողովուրդներու կան ես քան վերջին ստրուկը: Գու քեզ ժողովուրդներու կան ես քան վերջին ստրուկը: Բայց գայլ ես՝ հօտը յօհովիւր կը յորջորջես, բայց գայլ ես՝ հօտը յօհովիւր կը յորջորջես, անունն է՝ ատելութիւն և շոտող: Սպասաւորներուդ անունն է՝ ատելութիւն և շոտող: Սպասաւոր դժբախտ հպատակներուդ արևը ջարդ: Հազարաւոր դժբախտ հպատակներուդ արևը ջարդ: Հազարաւոր օրէն և կեանքէն զրկեցիր. անոնց մարեցիր. զանոնք օրէն և կեանքէն զրկեցիր, ինչպէս շրթունքներուն վրայ խօսքերը պաղեցուցիր, ինչպէս

մտքերը՝ անոնց ուղեղին մէջ: Եւ Կովկասի մէջ՝ ստեղծեցիր Տայիբու և բրիտանացիներու ստոր և անարգ թշնամի մը— ֆանատիկոս թուրքը: Որպիտի դժբախտ կուի և Տայիբու համար՝ բռնակալութեան ապուշ գործիք դարձած այս տարրի դէմ: Հայ երիտասարդութիւնը փոխանակ նեաւելու մտքերու անհուն տարածութեան մէջ և փոխանակ ստեղծագործելու, բռնագատուած կը տեսնէ ի իրը՝ զէնք վերջնել իր ընտանիքի և հայրենակիցներու գոյութիւնը պաշտպանելու:

Գու, գահակալ Բոսնիոյ, որ հայ երիտասարդութիւնը անբան և տգէտ թուրքերու աստիճանին ինչեցնել և կամ այս անարգ կուիով բոլորովին ոչնչացնել ուղեցիր, դու մեղադրուած ես և դատապարտուած: Թող ներկայ ժամուս ընդարձակ կայսրութեան մէջ մուշտոյ փոթորիկը ջնջէ քեզ աշխարհի երեսէն, ինչպէս չարազետ ուրևական մը— քեզ, քուկիներդ, և քո արիւնարբու վայրագ կողակներդ: Թող մոռցի անունդ և կորսուի յաւիտենական խաւարի մէջ ինչպէս իշխանութեանդ վերջին հանգիւնը՝ անհուն անգունդի մէջ:

Բազմութիւ նահատակները Բագւի, Շուշիի, Երևանի և Կախիճեանի, ինչպէս և բու մեղսակիցներուդ ձեռքով աւերակ դարձած բոլոր հայ գիւղերը՝ քեզի դէմ կը կանգնին: Աշխարհ-արաբած գիտէ որ ուսու-թաթար ոստիկանութիւնն է Կովկասեան սարսափներու կազմակերպողը և թերևս վաղն ալ պիտի կազմակերպէ անոր շարունակութիւնը: Ամբողջ աշխարհ գիտէ, որ բռնապետութեան զօրքերը միջամտեցին պաշտպանելու համար մահապահանները բրիտանացիներու դէմ, որոնց անսպասելի և կորովի դիմագրութիւնը թշնամիի բանակը վհատեցուցած էր: Ամեն ոք գիտէ, որ այսօր ևս վարձկան ոստիկանութիւնը կը շարունակէ հայերը զինութեան ընել և թուրքերուն զէնք տալ: Ա. Երջապէս ամբողջ աշխարհ գիտէ, որ ուսու կառավարութիւնը յանցաւորները գտնելու և զանոնք պատժելու կերծ փորձ մըն ալ չըրաւ: Սակայն հակառակ այդ բոլոր ոճիրներուն, դաւադրութիւնը չը յաջողեցաւ ամբողջութեամբ: Բաջալբուած և զինուած հայ կոմիտէներէն, մանաւանդ Հ. Յ. Կաշնակցութիւնէն, հայերը յաղթանակօրէն դիմադրեցին վատասիրտ յարձակողներուն և զանոնք վախցնելու նպատակով՝ յարձակողականի անցան:

Չուր տեղը չէ որ մութ թուրք լրագրող մը իրեն թող տեց հետեւեալ սրտազեղ տողերը. «Երբ օրթոտօքս ուս մը թուրքի մը կը հանդիպի, արիւնակցութեան ձայնը կը սկսի խօսիլ, ուսը իր թաթար հիւրօրը առջև կանգ կ'առնէ և անոր մէջ ֆիզիքական և բարոյական ազգակցութեան զօրք կը գտնէ»: Երբ օք որ ուսներու մասին է խօսքը: Անշուշտ ուսու մտաւորականութեան մասին չէ խօսքը, այլ նոյն այդ մտաւորականութեան թշնամիներու, այն չարագուշակ տարրերու մասին, որ թաթար մտագողական կառավարութիւնը ժառանգութիւն ձգեց. այն յետամնաց և հարստահարիչ տարրերու մասին, որոնց լուծին ներքև կը հեծնն ցարբերու կայսրութեան բոլոր ազգերը, նոյն իսկ ուսները: Այս տարրերու մարմնացումն են ճրբուպով և իր բարեկամ դահիճները: Եւ ահա մեր աչքերու առաջ կը պարզուի ուսու մտաւորականութեան համաշխարհային մոլեգին ճակատամարտը— հայերու և վրացիներու հետ միացած, միևնոյն թշնամիներուն՝

մինչև այժմ անքաղաքակրթելի ազգի մը մնացորդներու՝ դէմ:

Ներկայ վայրկեանը լեցուն է սպառնալիքներով ու յոյսերով: Կարողութիւնը վիթխարի աղէտի մը առաջ կը գտնուի: Ռուս-թաթարական բռնակալութեան վերջնական անկումովը Մեծ-Վարդապետանին գահն ալ պիտի գլորուի: Ազատութեան բոցը կայծակի արագութեամբ տարածութիւններ պիտի անցնի, և նոյնիսկ Եւրոպան աղատ պիտի շնչէ: Ամբողջ երկիրը երկար ժամանակէ ի վեր արիւնով յափուացած, խաղաղութիւն և իր բոլոր զաւակներուն բարգաւաճում կը պահանջէ:

Մտ է լուծուած: Եւ ան առանց ձեզի չը պիտի կատարուի: Դէպի գործ ուրեմն, քաղաքացիներ, հայեր ու վրացիներ, նա որ կը յուսայ, նա որ կը վախայ, և նա որ կը սիրէ. նա որ գիտէ և նա որ կը հասկնայ, դէպի գործ, և եթէ հարկ է դէպի զէնք, և բոլոր դ միացած:

Չը մոռանաք զիրար, նոյնիսկ ահաբեկի կուլին մէջ, որովհետև կուի համար չէ որ պիտի կուլիք, գիտէք որ կուի վերջին խօսքը չէ: Նպատակը քաղաքակրթութիւնն է, որուն դուք առաքեալներն ու մարտիրոսներն էք:

Հայութեան ոգին վահանն է, և անկարող յետամուտ լինելու՝ անգութ և արիւնալի երկար վրէժխնդրութեան զգացումին և կամ իր թշնամիներու ջնջումին: Հայ ժողովուրդի գոյութիւնը պահպանել, համաշխարհային առաջադիմութեան աշխատակցիլ և թուրք բազմակրթել. Ահա իր նպատակը:

Եթէ այս չէր Բաջալբի ահանաւոր հայ բանաստեղծի երազը, թշառութեան մէջ տառապող նահատակի երազը, որ քիւրդերի ձեռքով սպաննուած իր սիրելոյն գերեզմանի վրայ նստած՝ կ'երազէր սիրուն ապագան, ուր այլ ևս գոյութիւն չունի ատելութիւն, ուր հայ բիւրդ, թաթար մանուկներ միևնոյն վարժարանը կը յաճախեն, բոլորը միասին, իբրև խաղաղ և համերաշխ ընկերներ:

Ի. Լ. Պ. Գ. Պ. Ա. Պ. Ա. Պ.

ՅՈՐԴՈՐՆԵՐ ԵՒ ՀՐԱՆՈՒԿՆԵՐ ՀԱՅԳՈՒԿՆԵՐՈՒՆ

(Մի հասում անհայ ձեռագրէ, որ լոյս պիտի տեսնուի)

Չ ի ն ո ռ ն ե ռ .

1. Հայդուկային կեանքը՝ կրցողի համար ամենախորթելի ու վեհմ կեանքն է աշխարհիս մէջ, չը կըրցողի համար՝ ամենագեղարն ու դժնդակը: Տասը տարուան մէջ չը տեսայ զինուոր մը, որ հիւանդութենէ մեռնէր, բոլորն ալ քաջաուղջ եղած են իրենց յեղափոխական կեանքին մէջ: Պէտք է ըսել որ մեր վեհապանծ ու ծաղկաւէտ սարերու օգերը, հրաշալի աղբիւրներն ու ջուրերը, զինուորներու կերած բանջարեղէնները, կամն ու մածունը և իրենց խղճի հանգստութիւնը, անոնց կրած սիրուն հրացանները և քաջալերող փամփուռները շատ ու շատ կօգնէին անոնց առողջութեանը:

2. Երբեք ալ չը կարծէք թէ խմբապետութեան մէջ մեծ փառք մը կայ, ընդհակառակը՝ խմբապետը խմբի

ծառան է և բոլոր մտահոգութիւնը անոր վրայ ծանրացած է. զինւորներու կեանքի ապահովութիւնը, գործերու ընթացքին մէջ ունենալիք հեռատեսութիւնը, կառավարութեան միշտ լարած դաւադրութիւնները նախատեսելը, ժողովուրդը զինելու խնդիրը, քիչ զո՛՛՛ տարով կամ բնաւ զո՛՛՛ չը տարով կռիւններէն դուրս գալը և խնամոտ ճարպիկութեամբ երկար տարիներ դործը շարունակելը—այս ամենը խմբապետի հոգալու բաներն են: Անշուշտ, այդ բոլորի հետ կապ ունի նաև ժողովուրդը, բանի որ առանց անոր քաջալերութեան և գործնական մասնակցութեան ոչինչ չենք կրնար ընել:

3. Կը պատահի որ ձեր խմբապետը զանազան մըտատանջութիւններով գրգռւած, մինչև իսկ բոլորովին անտեղի, մէկ կամ երկու քիչ վրայ բարկանայ և անտեղի քայլեր անէ, չըլլայ որ վերաւորէիք: Ի հարկէ՛՛ կթէ գուք մէկ մտածէք, անիկա պարտաւոր է հարկւր մտածել և ուստի պէտք է գուք զիջող ըլլաք: չը վերաւորէիք և չը խռովիք: Առհասարակ բոլոր ընկերներդ պէտք է իրարու վրայ ցաւիք և դուրս գուրաք. այս է ձեր գլխաւոր ազնուութիւններէն մէկը: Խմբապետն ալ զգալով որ իր ըրած յանդիմանութիւններն ու վարձուքն անտեղի էր, պէտք է անմիջապէս զինորի սիրտը սիրաշահէ:

4. Միշտ նայեցէք ձեր խմբապետին—կուրի և խաղաղութեան ժամանակ—թէ ինչպէս գործ կը ղեկավարէ, որ գուք ալ հետզհետէ փորձառութիւն և հեռատեսութիւն ձեռք բերէք:

5. Զինւորական խորհուրդի ունեցած գաղտնի որոշումներն իմանալու չը հետևիք: Երբ ձեզի վերաբերեալ խնդիրներ եղան, կը յայտնեն ձեզի. իսկ եթէ ձեզ վերաբերեալ գործ չէ, իրենց մէջ կը պահեն:

6. Երբ խմբապետը հրաման ըրաւ դիմել մը ուրիշ դիրք փոխադրելու, կողք տալով թշնամու կողմը շատ արագ և ծուռ ու մուռ շարժումներով կ'երթաք ցոյց տւած դիրքը: Կուրի ժամանակ փամփուռները խնայեցէք. լսեցէք ձեր հրամանատարին առանց հրամանի պարագ սեղ չը կրակէք. ընելիքնիդ մէկ կուրի: Գեռ շատ կռիւներ ունիք մղելիք թշնամուն հետ:

7. Հրացանները քանդած և սարքած ժամանակնիդ՝ դուռնացէք, որ քանդելիք թով չը վերաւորէք «Վինդերու» գլուխները: Աինդ քանդելու համար, նաև բանդիլի բերանը լաւ պէտք է լինի: Թէ քանդելու և թէ սարքելու ժամանակ՝ երբ քանդիչը վինդի գլուխն էր անցուցեր, պէտք է ձեռքերնիդ ուղիղ պահէք և թեւերնիդ ամուր, որ քանդիչը պարագ չը դառնայ:

8. Խաղաղ ժամանակ բարակ թուղի վրայ անցուցէք չոր մը և հրացանները այնպէս մաքրեցէք: Երբ մազաչափ վերաւորէք փողը՝ կրակած ժամանակ փամփուռը վերաւոր դուրս կը հանէ, մինչև անգամ կարող է փամփուռը կտրել: Այս կէտը լաւ մաքրելիդ պահեցէք:

9. Ամուր եթէ ողնի պատահի, նրա իւղը առէք և պահէք ձմեռան համար: Հրացանի սիւրմէն երուն (գատոր) ողնու իւղը քսելուն պէս՝ մեքենայի նման կը բանի. այս փորձած է: Ողնու իւղի հետ խառնեցէք քիչ ալ քարիւղ (նաւթ): Միւս իւղերը հը-

րացանի «գատորը» կը փչացնեն և շատ դժւարութեամբ կը բանի:

10. Հրացանները մաքրած և փամփուռները մէջը փորձած ժամանակնիդ, դատարկ լինի հրացանը թէ լեցւած, պէտք է սովորութիւն ընէք բերանը դէպի վեր բռնել: Եթէ ընկեր մը, մինչև անգամ երբ հրացանը դատարկ է, ընկերոջ մը կ'ուղղէ անոր բերանը կամ անծանօթի, պէտք է խիստ յանդիմանել մինչև անգամ պատժել այդպիսի ընկերը: Ատանպ չը պատահած՝ խիստ լինելու է, եթէ ոչ՝ երբ ընկեր մը կամ ժողովրդէն անհատ մը վիրաւորեցաւ կամ սպանեցաւ, կուգէք փոխարէնը սպաննէք այն ընկերը, որու ձեռքէն կրակը բացեցաւ—ի՛նչ օգուտ: Այս կէտը լաւ ակնջնիդ պահեցէք: Ընկերասպան մը մինչև վերջին շունչը պէտք է խղճովը տանջել՝ եթէ զգացումի տէր է:

11. Չմեռ ժամանակ ձեր հրացաններու գատորներու վրայ մուշամբայի կտորներով ծածկոյթ շինեցէք, անցուցէք վրան և կոճակներով կոճկեցէք, բայց ոչ բոլորդ: Խմբի առաջն գնացող չորս հոգիները չը պէտք է անցնեն այդ ծածկոյթը և հրացաններու բերանը շորով գոցելու չեն. տեսաք յանկարծ թշնամի պատահեց, առաջին կրակը միշտ պէտք է ձեզնէ բացել թշնամու վրայ:

12. Չեր հագուստի կամ ուտելիքի համար խտտապահանջ չը լինէք՝ ըսելով թէ այս ինչ ընկերը լաւ կտորէն շոր հագած է, իսկ ես վատ կտորէն հագած եմ: Ամեն մարդ պարտաւոր է խնայողութիւն ընել: Մեր ամենակարևոր պիտոյքներն են՝ փամփուռը, վանօդ, զնդակ, կապիւլ, պահեստի պաշար, փամփուռը լեցնելու գործիքներ, ոտնամաններ և գուլպա:

13. Ման եկած ժամանակ՝ իհարկէ ժողովրդի մէջնէ բարեկամներ կ'ուսննաք, միշտ անոնց հարց ու փորձ ըրէք: Եթէ ընդհանուր գործի կամ խմբի վերաբերեալ որեւէ վտանգաւոր լուր մը լսէք, անմիջապէս յայտնեցէք ձեր խմբապետին կամ տասնապետներուն: Չեզ պատուածը մինչև իսկ սուտ ալ լինի յայտնեցէք ձեր պետերուն. անոնք այդ հարցը մանրամասնութեամբ կը բնեն և պէտք եղած զգուշութիւնները ձեռք կ'առնեն:

14. Ուտելիքին պէտք է հաւասար նայէք. խնձոր մը իսկ լինի, պէտք է հաւասար բաժնէք: Աերակուրի ժամանակ բոլոր զինւորները տասնեակ-տասնեակ պիտի նստին և տասնապետներն ալ տասնեակներու հետ: Հաց ուտելու ժամանակ տասնապետները առանձին չը պէտք է նստեն:

15. Ճամբորդութենէ մը երբ ձեր բնակած տեղը հասնիք, մօտիկներու մէջնէ փամփուռները դատարկ կեցէք: Բերդանի կամ որեւէ ուրիշ հրացանի մը մէջ, որ մէկ փամփուռ կ'առնէ, երբէք փամփուռ չը դնէք: Ուր որ ալ լինի վտանգ պատահած ժամանակ փամփուռը գնելը շատ դժւար է: Չեր բնակավայրը հասնելուն պէս բոլոր հրացանները դատարկեցէք, շատ լաւ մաքրեցէք, և գատորներէն ալ կախեցէք, որ զսպանակները չը թուլանան:

Ա Ն Գ Ր Ա Ն Ի Կ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

ԹԻԻՐԻՔ-ՊԱՐՍՎԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

1906, ապրիլի 30

Վասպուրականի շրջանից սուրհանդակով ստացած նամակները կը հաղորդեն հետևեալ տեղեկութիւնները:

Վանի մէջ ջամիներում (աղօթարաններում) ժողովներ կը լինին՝ յայտնի շէյխերի և մօլլաների ղեկավարութեամբ, որոնք բացարձակ կոտորածի կոչեր կընեն:

Արձէշ ատոր նշանը արդէն տեղի ունեցած է: Մարտի վերջերը թիւրքերը յարձակած են եկեղեցու վրայ հայերը կոտորելու. բարեբախտաբար ուշ կը հասնին—ժողովուրդը ցրւած կը լինի, միայն 10—15 մարդ կը վիրաւորին դաշոյններով ու փայտերով:

Վանի մի թաղում նոյն տեսակ փորձ տեղի կ'ունենայ: Ամբոխը կը պատրաստուի յարձակել, բայց զօրքը կարգելէ՝ անժամանակ և անպատեհ համարելով: Այդ թաղի ժողովուրդը երկիւղի մէջ է:

Տեղեկ աղբիւրներէ բղխած լուրերին նայելով՝ Պօլսէն հինգ պալատականներէ բաղկացած մասնաժողով մը գալու է Վան իբր թէ բարեփոխութիւններ մտցնելու, բայց երևի հակահայկական շարժում ղեկավարելու համար:

Շատ դէպքեր եղեր են, որ թիւրքերը իրենց պարտքերը և հայերէ գնած ապրանքներու գները չեն վճարեր, սպառնալով, թէ «եթէ համարձակէք պահանջել ձեզ կը կոտորենք»:

Մարտի սկիզբները 200 զինուոր խուզարկութեան կերթան Ալեքո գիւղը թնդանօթներով, նաւթով: Ի հարկէ ոչինչ չեն գտներ:

Լուր կայ, որ մօտ ժամանակներս Վանի մէջ խուզարկութիւններ պիտի լինին, այն ալ զինուորական—ամբողջ թաղեր: Հիւսպատոնները երաշխաւորութիւն ունեցած են, որ խաղաղ ժողովուրդին չը դպչին. երաշխաւորութիւն չեն տւած:

Ն Ո Ր Կ Ա Ր Ի Ա Մ Ն Ե Ր

(Նամակ Կիլիկիայէն)

ՊէՅՐՈՒԹ, 20 մայիս

Իրէկ ուսւ բռնապետութիւնն էր որ կը փորձէր յափշտակել հայ ժողովրդի եկեղեցական կալածանքն ու իրաւունքները՝ յանուն ցարիզի, այսօր ալ Երզրզի խենթը, հայ արեան այդ անկուշտ յարաւէզը՝ բաջալերած իր հիւսիսային դրացոյն ցնորած օրինակէն և գինովցած իր բարեկամին, Աիլհիւմին, մեծամոլութիւններուն իւրացումովը, իր հիւանդ մտքին մի մղբգին ակտաթամին՝ կուգայ էջ մըն ալ աւելցնել իր բռնութիւններու տարեգրութեան—յարբունիս գրաւելով դարերէ իվեր Կիլիկիոյ Աթոռին անվիճելի սեփականութիւնը եղող Թլանի Ագարակ կոչւած հողային մեծ կալածքը, որ գրեթէ հասոյթի միակ աղբիւրն էր Կիլիկիոյ Աթոռին: Եւ աս ալ յանուն Երզրզի

տխրահոգակ անկիւններում մշակած այն հայաջինջ ծրագրին մի յօգւածին՝ անհրաժեշտ պէտք մըն է իւրամ վանդաւոր տեղաւորել հայ ազգաբնակութեան սիրտը կազմող կետրոնին մէջ, որպէս զի այս արիւնարբու ու աւերիչ տարրերը քամեն ու ցամքեցնեն ինչ որ մնացած է հայ արիւնէն:

Կարևոր նշանակութիւն ունեցող այս բոթը կայծակի արագութեամբ տարածւեցաւ Կիլիկիոյ ամբողջովին թմրած մթնոլորդին մէջ ու ասա քնացող Կիլիկիան սրտեր ցնցեցան աս անակնկալ հարւածին ազդեցութեամբ: Առաջին վայրկեանին շատեր սկեպտիկ ժպիտով մը վերաբերւեցան դէպի այս լուրին ստուգութիւնը, որովհետև ո՛չ որ հաւատալ պիտի ուղէր, որ Կիլիկիոյ կաթողիկոսին շնորհւած «կայսերական ունկնդրութեան» միջոցին տրւած այդքա՛ն յուսալից և փայլուն խոստումներէ վերջ՝ բարեխնամ ու հպատակաւոր սուլթանը փափագէր խանգարել ու վրդովել իր «հաւատարիմ հպատակներուն» անդորրութիւնը: Նոյնիսկ Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսը այս աղէտքը գուժող հեռագիրը ձեռքը բռնած՝ կէս քուն կէս արթուն աչքերը շփելով չէր ուզեր հաւատալ որ իր «բարեգութ կայսրը» այդքան փայլուն կապիտոլէ մը վերջ զինքը առաջնորդէր Տարպեան ժայռերուն: Աւա՛ղ փառացս անցաւորի... Խեղճ կաթողիկոսը կը նմանի այն հիւանդին, որ իր սուր ցաւերը քիչ մը ամոքելու համար ներարկւած մօրֆինի կարճատև ազդեցութիւնը անցնելէ վերջ, յամառօրէն չուզեր հաւատալ աւելի խիստ կերպով վերսկսած ցաւին: Ա՛յ միամիտներուն...

Տակաւին երկու տարիները չը լրացան այն օրէն, երբ հեռագիրը կ'աւետէր Միջերկրականի փերէն մինչև Տաւրոսի գագաթները, Սիհանի եզերքներէն մինչև Լիւրասի եզերքները կայսերական մեծաշունչ «բերկրաւիթ» շնորհները, զորս Արգիւլ-Համիդ՝ ունկնդրութեան միջոցին, կաթողիկոսին խոստացած էր «արդարութիւն», «հանհատական և ազգային իրաւունքներու յարգում», «քաղաքական բանտարկեալներու ազատ արձակում», «ճամբորդելու դիւրութիւն» և այլն և այլն: Այո՛, արդարութիւնը իրագործւեցաւ «շնորհիւ վեհափառ կայսր», այո՛, անհատական և ազգային իրաւունքները ճանչցեցան ու յարգուեցան... Տեսէ՛ք, երէկ Նաճարը հայ գիւղին բնակիչներուն ձեռքէն իրենց սեփական հողերը առնելով՝ թիւրք մուհաճիւններուն բաշխեցին, այսօր ալ թլանը կը յափշտակեն ու թաթարներուն պիտի բաշխեն: Այո՛, քաղաքական բանտարկեալները արձակուեցան—Գօմանտանի մը հիւանդոտ խեղապատակին մէջ ծնունդ առած անձնական մեծամիտ ծրագիր մը հարիւրաւոր անմեղ հայեր հաւաքեց Հալէպի բանտին մէջ, որոնք ութը ամիսներէ իվեր առանց ուէ հարցաքննութեան կը հեծեն խոնաւ զընտաններու մէջ: Եւ այս ալ շնորհիւ ամենաողորմած վեհ. սուլթանին արդարասիրութեանը: Այո՛, ճամբորդելը դիւրացաւ հայու համար... հայը այսօր մեծ արգելքներու ենթարկւած է իր բնակած կուսակալութեան մէջ իսկ ճամբորդելու:

Խեղճ և անհեռատես կաթողիկոսը մեծ մեծ բաւերէն շլացաւ, շփացաւ ու... խաբւեցաւ, բողբոլին անտեղեակ համիդական ռէժիմին մաքրալէլական մեքանայութիւններուն: Երբզրզը՝ ուր օջարակի ձևով ու

գործով թոյներու բաժաններ հրամայելու գաղտնիքը շատ լաւ գիտեն, ԵՐԼԲԵՂԸ՝ ուր թուանալից երգիծանքը շինծու և մեղմ փոփոխելով դրուագելու խորամանկութիւնը ունին, ԵՐԼԲԵՂԸ՝ ուր մասնաւոր առանձնաշնորհ-հումը ունին մէկ ձեռքով երազներ շնորհելու ու միւս ձեռքով իրականութիւններ խլելու, ԵՐԼԲԵՂԸ՝ ուր իրատէներ հրատարակելը և ագոնք չը գործագրելը սովորութիւն մը դարձած է, բնականաբար դժարութիւն մը չը պիտի բաշէր Սահակ կաթողիկոսի պէս իր կեանքին մեծագոյն մասը վանքի մը անկիւնը անցուցած մէկ մարդուն աչքը փոշի նետելու. ու իրօք ալ յաջողեցաւ: Արիւնիոյ կաթողիկոսը ո՛չ դիւանագիտութիւնը ունէր և ո՛չ ալ ունակութիւնը կռահելու համար Հասմունքներու, Կարահիմներու և Իզգէթներու հոգեբանութիւնը:

Կաթողիկոսը խափեցաւ, ժողովուրդն ալ մէկտեղ: Բայց ամեն ինչ կորսած չէ: Մեր ժողովուրդը պատմական մեծ դերի մը կոչուած է. թո՛ղ օրինակը իր Աովկասեան եղբորմէն առնէ, թո՛ղ աչքը անկէ Յեղափոխութեան, որ պատմական պէտք մըն է այս անօրէն երկրին մէջ, որովհետեւ «Տպագրութիւն» ոչ թէ պաշտօնքով կը տիրանան իրենց ազատութեան, այլ այն ճանապարհով, որ գծած է Յեղափոխութիւնը:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

Գ Ա Ր Ձ Ե Ա Լ Վ Ա Տ Ն Շ Ա Ն Ն Ե Ր

Շուշի, մայիսի 2

Վարանդայում կատարուած բռնութիւնները, մեր մի շարք բողոքող հեռագիրները, Աէյդէնբաումի կատարած քննութիւնը, սպացուցուած փաստերը, քննիչների տուած խոստումները, փոխաբայի արտայայտած զայրոյթը, տեղի ունեցած դէպքերի առթիւ, համարեա դրական ու չինչ չտեսնելն, բացի Երմուշայեվի Գանձակ կանչելը: Բարանովսկին պատում է գիւղերը և թեթեւ քննութիւններով է զբաղուած: Զինուորական քննիչը և պրօկուրորը դեռ գիւղերը չեն անցել: Մալամայի գալը նոյնպէս ոչինչ չտեսց: Եկաւ, իսկոյն անցաւ Գորիս, միւս օրը վերադարձաւ, ընդունեց մի քանի մարդկանց, ի թիւս որոց մի խումբ օրիորդներ ու տիկիներ, համաձայնեց որ «իսկապէս շատ ցաւալի դէպքեր են տեղի ունեցել», որ յանցաւորները կը պատժեն, որ ինքը յատկապէս բռնի խնդրով է եկել և... վերադարձաւ Թիֆլիս:

Հարունակ մեզ տեղեկութիւններ են տալիս, որ կօզակները նորից պէտք է այցելեն Վարանդայի ու Խաչենի գիւղերը շարունակելու իրենց բարբարոսութիւնները ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է: Վերջին դէպքերը ժողովրդին յուսահատութեան մէջ են գրցել: Ընայած որ մեր ընկերները շարունակ պատում են այնտեղ՝ յուսագրելու նպատակով: Կառավարութեան պնդումները, յանձնել յեղափոխականներին— դժուր չարիքների պատճառներին, կարծէք ազդում է մեր անհեռատես և անգիտակից ժողովրդի վրայ: Բոլոր պաշտօնեաների գաղտնի նպատակը այժմ այդ է—պառակտումն գցել ժողովրդի և յեղափոխա-

կան տարրերի միջև ու բերել ամբոխին այն համոզման, որ եթէ երես դարձնեն յեղափոխականներից, կառավարութիւնը անմիջապէս խաղաղութիւն կը շնորհի բոլորին: Տարաբախտաբար, մեր ընկերներից շատերի անունները տարածուած են. թէ ժողովուրդն է ճանաչում նրանց և թէ կառավարութիւնը: Ազատ չեն կարողանում գործել վախենալով ձերբակալութիւնից: Այս հանգամանքը մեծ վնաս է տալիս մեր ձեռնարկներին,— մարդիկ փախստական դրութեան մէջ շատ քիչ գործ են կարողանում կատարել: Անհրաժեշտ է կառավարչական այս խորամանկութեան առաջն առնել:

Թիֆլիս, մայիսի 16

Հուշուց ստացուած է հետեւեալ պաշտօնական հեռագիրը: Հայերի ու մուսուլմանների մէջ փոխադարձաբար տեղի ունեցող մարդկանց գերելու, անասուններ յափշտակելու և սպանութիւնների փաստերը լարեցնելու ազգութիւնների յարաբերութիւնները: Քաղաքի մէջ երթևեկութիւնը մի մասից միւս մասը ընդհատուած է: Լալախ—Հուշի խճուղին անապահով է: Գրութիւնը չափազանց վրդովեցուցիչ է:

Շուշի, մայիսի 16

Հայերի ու մուսուլմանների մէջ փոխադարձաբար մարդկանց գերի վերցնելը, խուլիքանների յարձակումներ ու սպանութիւններ կատարելը և պրօվօկացիաներ անող տեղական բէգերի գաղտնի ինտրիգները, տգէտ մասսան շահագործելը՝ ազատ կերպով շարունակուած են: Քաղաքի և գաւառի դրութիւնը չափազանց երկիւղալի է. խնդրում ենք միջնորդել փոխաբայի առաջ այստեղ ուղարկել գեներալ Գոլջապովին, իսկ Վեփերնի պատժիչ զօրախմբի գործողութիւնները առայժմ դադարեցնել տալ, մինչև որ երևան կը հանուեն վերջին դէպքերի իսկական յանցաւորները:

Շուշի, մայիսի 16

Գներալ Մալամայի Գորիս ուղևորվելուց մի ժամ յետոյ, Լիսօգորի ճանապարհին թուրքերը յարձակեցին հայ կարաւանի վրայ, սպանեցին երկուսին և չորս հոգի էլ գերի տարան: Ապրիլի 30-ին թուրքերը յարձակեցին Գերգեր գիւղի վրայ, մորթեցին եօթ հոգու, ի թիւս որոց Ախտա գիւղացի Ստեփանեանցին: «Խանի-բաղի» մօտերքում եղած ընդհարման ժամանակ սպանվել են մի հայ սալլապան և մալիբեկուցի մի թուրք: Ախտաուրեւ են մի հայ և երկու թուրք: Մալեբեկուցիները քշեցին տարան դադաղանցիների անասունները, գերի վերցրին շուշիքենդցի Գանիէլեանցին: Մայիսի 9-ի գիշերը Խօջաուլի մօտերքում սպանւել է մի մուսուլման, այդ միևնոյն ժամանակներում անհետացել են եօթ թուրքեր: Մուսուլմանները մեղքը գցում են հայերի վրայ. ուստի պատժիչ զօրախումբը այսօր գնում է պատժելու շրջակայքի հայ գիւղերը՝ իրեն յատուկ անարդարութեամբ:

Թիֆլիս, մայիսի 16

Պաշտօնական հեռագիր: Զիվանշիրի գաւառի շրջանում Խաչենի մօտերում գերի են տարւել մի քանի ճանապարհորդ հայեր: Արձանները շարունակուած են: Լէնց այս բօպէիս Արամեանցը հեռագիր է ստացել

Եւրախից, մի ոմն Լիստիրմանից, հետեւեալ բովանդակութեամբ. «Ձեր ազգականներին այսօր Շուշի տանող ճանապարհի վրայ թուրքերը բռնել են: Բոլորը՝ ինը հայ ճանապարհորդներ են: Ինձ, իբրև ուստի, արձակեցին»: Քաղաքի դուռը շարժուած է:

Շուշի, մայիսի 16

Մայիսի 15-ին, երեկոյեան դէմ կայարանում կայծակի արագութեամբ լուր տարածեց, որ Աղզամի մօտերը, խճուղու վրայ թուրքերը կանգնեցրին երկու հանրակառ. քեր, առանձնացրին ճանապարհորդ հայերին, և ուրիշ ազգութեան պատկանող ճանապարհորդներին արձակելով, առաջարկեցին վերադառնալ Եւրախ, իսկ հայերին գերի տարան: Այդ լուրը ստուգելուց յետոյ պարզեց հետեւեալը: Առաւօտեան Եւրախից Շուշի ուղևորեցին երկու հանրակառ. ք. ճանապարհորդները տասը հոգի էին, որոնցից երեք հայուհի իրենց երեսակներով երեք ուսներ և մի հրէայ: Ճանապարհին մինչև Աղզամ գիւղի սահմանները բոլորովին խողաղ էր, բայց մի քանի վերստ հեռու այդ գիւղից, ուր գտնուում է պօստի կայարանը, երկու հանրակառ. քերն էլ շրջապատվեցին 40 զինուած թուրքերով, որոնք առաջարկեցին ճանապարհորդներին իջնել և, նախապէս կողոպտելով բոլորին, հարցաքննեցին ու ջնկեցին հայերին, որոնց և գերի վերցրին:

Այդ տեղեկութիւնը այստեղ ճշտող տպաւորութիւն թողեց: Փաստօրէն պօստի խճուղին փակուած է և յարաբերութիւնները Շուշու ու երկաթուղու միջև ընդհատուած:

Շուշի, մայիսի 17

Տխուր լուրեր են ստացել այստեղ: Այն ինչից որ վախենում էինք, կատարեց: Սուլթանբէկի անտառում, Խաչէն գետի մօտերը, գտնուած են 10 դիակ: Գրանք հաւանօրէն գերի վերցրած հայերի դիակներն են: Հաղորդում են, որ Աղզամի և Փիր-Բուլաղի միջև տեղի է ունեցել հրացանաձգութիւն: Կողոպտուած են հայերի մի քանի ֆուրգօններ: Ահիւկընը վերցրել է հայ գիւղացիներից 3000 ռուբլի տուգանք իբրև պատիժ գերի ընկած թուրքերի համար: Նրան յանձնուած է նոյնպէս հայ գերիների ազատելը թուրքերի ձեռքից: Աւելի չարամիտ կարգադրութիւն չէր կարելի սպասել: Խանքենդում սպանել են մի հայ և մի թուրք: Ընդհանուր արամադրութիւնը շատ ճշտող է:

Եւրախ, մայիսի 17

Մայիսի 14-ին Շուշու գաւառի սահմանի վրայ, Խաչենկա գետի մօտ, վեց թուրքեր բռնութեամբ գերի վերցրին պօստի արակտի կառ. քերով Շուշի գնացող չորս հայերի ու տարան Շուշու գաւառը: Հայերից կողոպտուած իրերի մի մասը գտնուած է: Մայիսի 15-ին, կէս օրւայ մօտերը, Աղզամի պօստային արակտի վրայ թուրքերը կողոպտեցին երկու հանրակառ. ք. և գերի տարան 14 հայեր: Գերիներին որոնելու համար կողակներ են ուղարկուած: Ճանապարհը փակ է: Ոչ ոք չէ վստահանում Շուշի ուղևորելը: Հայ գերիների մասին դեռ որոշ բան յայտնի չէ: Տեղեկութիւններ են ըստացուած, թէ Աղզամի մօտ՝ Սուլթանբէկի անտառում գտնուած են 10 դիակներ: Լուրերին նայելով հայերն

էլ մի քանի թուրք գերիներ են վերցրել: Ամեն կողմից նկատուում են պրօվակացիայի նշաններ:

Թիֆլիս, մայիսի 19

Շուշուց եկած մի թուրք պատմում է հետեւեալը: Մի քանի օր առաջ հայկական մասում ցրուում ու պատերից քարշ են անուում թուրքիկներ թուրքերի կողմից, որոնց բովանդակութիւնն այս էր: «Հայերը չը կարծեն, թէ մենք խաղաղել ենք, մենք ձեզ նորից կուր ենք կանչում իբրև անհաշտ թշնամիներ»: Մէկ երկու օրից յետոյ համարեա նոյն նախադասութիւններով մի ուրիշ թուրքիկ է լըյս տեսնում թուրքական մասում հայերի կողմից: Նոյն թուրքը պատմում է և այս փաստը, որ ուս սպաներից մէկը ասել է թուրքերին. «միւս շաբաթ իմ հերթապահութեան օրն է և ես ձեզ լիազօրութիւն եմ տալիս յարձակել հայերի թաղերի վրայ. իմ կողմից ոչ մի խոչնդոտ, ոչ մի արգիւք չի լինի»: Պրօվակացիան նորից սկսել է արիւնահեղութիւնների սերմեր ցանել:

Շուշի, մայիսի 19

Խանքենդու մօտ թուրքերը սպանել են Շօզ գիւղի բնակիչ Ժամհարեանին: Շուշի-Եւրախ խճուղին փակուած է հայերի համար: Սկսած մայիսի 14-ից հայերի ապրանքները և ուտելու մթերքները կամու տեղ չեն հասցրած մալիւրեկուցի թուրքերի շնորհիւ: Գնեւրալ-նահանգապետ Ալֆտանը Շուշումն էր: Գնաց Խանքենդի, խոստացաւ գտնել գերիներին, որոնց թիւը, ըստ երևոյթին, շատ է: Ոչ ոք նրան հաւատ չի ընծայում: Երէկ մահմեդականները յարձակեցին հայ խճուղու գիւղի վրայ: Հետեւանքները յայտնի չեն:

Շուշի, մայիսի 19

Երեք օր է թուրքերը սաստիկ բոյոտ են յայտարարել հայերի դէմ և ոչ մի ապրանք չեն ծախում: Թուրքի բազար գնացող գնորդներին, նոյն իսկ ազգեցիկ հայերին, նրանք հայհօյել ու ճանապարհ են դրել: Մէկը մինչև անգամ ասել է. «Այս ուսը մեր արանքից ձեռք չը քաշեց, որ մենք իրար կոտորէինք ու պրծնէինք...» Գրութիւնը սաստիկ լարուած է: Չը նայելով այդ ամենին՝ քոչը գնում է անփորձ, անվնաս. հայերը չեն դիպչում: Գէպի Եւրախ գնալը ընկի բան է, շատ մարդ սիրտ չէ անում և գործ ունեցողը մնացել է տանը նստած: Պրօվօկացիան ուժեղ կերպով առաջ է գնում: Քաղաքը անտէր է: Մարդ չը կայանող, կարգադրող չը կայ: Ոստիկանութիւնը մարդասպաններին թողած՝ յեղափոխականներ է որոնում:

Շուշի, մայիսի 19

Քոչը քաղաքի միջով կանոնաւոր կերպով անցնում է՝ գնալով եայլաղները: Հայկական մասով ապահով անցնելու համար հայ հասարակութիւնը նշանակել է իր կողմից թէ քաղաքի մէջ և թէ դուրսը պահապաններ, որոնք խիստ կերպով հսկում են և միաժամանակ արգելում հայերին՝ չը մօտենալ քոչուներին, ոչինչ չը գնել նրանցից, մի՛ գուցէ որևէ աննշան դիպած առիթ լինի զանազան անախորժութիւններին: Ասել է թէ հայերը ամեն հնար ու միջոց գործադրում են անփոք ընդհարումներից խուսափելու համար:

Թիֆլիս, մայիսի 19

Ցարիզմի հովերը դեռ աղատ փչում են հայաբնակ վայրերում: Նորանոր սարսափների ու խժգոնութիւնների լուրեր են գալիս ամեն օր, ամեն ժամ: Հայ գերիները ո՞վ գիտէ ինչ սոսկալի վիճակում սպասում են օգնութեան: Խաչէնը Վեֆերնի բարբարոսութիւններից է հեծում: Շուշում հայ-թուրքական յարաբերութիւնները կտրւած են և մթնոլորտը վտանգաւոր է դարձել: Գանձակում և շրջակայքում գրուծիւնը նոյնպէս լարւած է: Արիւնաքամ ու սարսափահար եղած Վարանգան իղուր արդար դատաւճռի է սպասում իր գահիճների վերաբերմամբ: Իսկ Ղաղախը, Ջիւանշիրը, Արէշը, Չանգեղուրը և միւս գաւառները սոված են և մահաւան սև սարսափին ենթարկւած: Իսկ այստեղ՝ Կովկասի մարաքաղաքում նորից հնչում են աւանդական խափուսիկ խոստումները, թէ «հարկաւոր միջոցները ձեռք են աւնւած», թէ «յանցաւորները կը պատժեն»: Մեր դառն փորձերը ցոյց են տալիս, թէ ինչ արժէք ունեն այդ խոստումները: Գրանք խաբեբայութիւններ են, որոնցով բոլորն էլ փոխարքայից սկսած մինչև վերջին թուրք պրիստաւը, ծաղրում են ամբողջ հայ ազգաբնակչութիւնը և ամբողջ երկիրը:

Թիֆլիս, մայիսի 20

Հայերը շարունակում են գիմել կառավարութեան և ունայն յոյսեր տածել: Մի քանի օր առաջ Շուշու թեմական առաջնորդը ներկայացաւ փոխարքային և խնդրեց՝ գեներալ Կօլոջչապովին, իբր անկողնիակալ անձի, նորից ուղարկել Շուշի, ապահովել Եւլախ-Շուշի և Շուշի-Գորիս ճանապարհները, որոնք վերջերս բազմաթիւ արիւնարբութիւնների ասպարէզ եղան, ապահովել գիւղացիների դաշտային աշխատանքները, յետ դարձնել Վարանգայի գիւղերից ապօրինաբար աւնւած տուգանքները, չը խլել զէնքերը հայերի ձեռքից ինչպէս չեն խլում թուրքերի ձեռքից, դպրեցնել Վարանգայի գիւղերում նոյն Վեֆերնի ձեռքով կատարուող խուզարկութիւնները, պատժել Վարանգայի տիրահազակ դէպքերի չարագործ հերոսներին, թող չը տալ քոչւորներին զէնք՝ տանել իրենց հետ և նոր նշանակւած մի պաշտօնիայի, որ յայտնի է իր արիւնոտ անցելով, հեռացնել ու տեղը նշանակել ուրիշ, աւելի վստահելի մէկին: Փոխարքան, լսելով այդ խնդիրները, խոստացաւ բաւարարութիւն տալ բոլորին, երևի այնպէս ինչպէս բաւականութիւն է աւել ց'այժմ եղած բոլոր խնդրքներին ու դիմումներին...

ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ԳՐԳՌՈՒՄՆ

Ձախգեղուր, մայիսի 21

Ձանգեղուրի ազգաբնակչութեան աչքերի առջև կանգնում է մի ահաւոր ուրւական: Գա քոչւորների մեր գաւառը մտնելու հարցն է, որ սպառնում է անօրինակ, արիւնոտ ընդհարումներ առաջ բերել բարբարոսութիւնները կարող են աւելի ու արեան մէջ թաթախել մանաւանդ Ախիանի գաւառամասը Այգ կողմերում թուրք ազգաբնակչութեան առանձին ոգևորու-

թիւն է ներշնչել քոչւորների գալուստը: Ոստիկանական-բերդարարական պրոֆօկազիան ստեղծեց Ախիանում ընդհարում Ուղ գիւղացոց և Վաղաղնեցի թուրքերի միջև: Հերոսը պրիստաւ Բազումովսկին է: Հետևանքը այն եղաւ, որ ուղեցիներից առել են 3000 լուբլի տուգանք և նշանակել 7 օր էկզէկուցիա, իսկ թուրքերից՝ 1000 ռ. և երկու յանցաւոր աւազակների յանձնումն: Բայց ձերբակալելուց յետոյ աւազակները կրկին փախել են կամ աւելի լաւ է ասել՝ բաց են թողել: Մերկի շրջանում առ այժմ լուռ է, եթէ չը հաշւենք կողոպուտի, տաւար քշելու մի քանի դէպքեր: Շիկահողեցիին սպանելու դէպքը թուրքերը վերագրում են Պարսկաստանից եկած աւազակներին, մինչդեռ դրանք տեղացի թուրքեր են եղել: Գա հաստատում է խաղաղարար յանձնաժողովի անգամ Աբգուլ Սամարբէգ Չաւանշիրը: Զէյլի շրջականերում թուրքերի ձեռքով սպանւել են երկու բէկեր: Թուրքերը դիակները տարել գցել են հայերի սահմանը, որպէսզի վերագրեն հայերին և էկզէկուցիա նշանակել տան Զէյվայում:

Առ հասարակ թուրքերը վրէժխնդրութեան կամ հայերին նիւթապէս վնաս հասցնելու նպատակով՝ աշխատում են նոյնիսկ իրենց ձեռքով սպանածներին հայերի սահմանը գցել: Լինի դա նոյնիսկ գերեզմանից հանած ոսկորներ: Նոր ապացոյցներ: Ալիգարա թուրք գիւղի բնակիչները լսելով, որ գաւառապետը գալիս է, գերեզմանից հանում են մի դիակ և տանում գցում հարւան հայ գիւղի հողի վրայ: Այս օրերս նվազեցի մի թուրք հողային վէճի համար սպանում է իր համագիւղացուն: Վկաները կենդանի են. սպանման գործողութիւնը կատարելուց յետոյ վերագառնում է գիւղը և հաւար է տալիս թէ շլաննձորցիները սպանեցին այսինչին: Թուրքերը իհարկէ զինւած, դուրս են գալիս և պատրաստուում՝ յարձակում գործել՝ բայց բարեբախտաբար ականատես վկաները պարզում են դաւադրութիւնը: Նոյն օրինակ մի դէպք տեղի ունեցաւ գիւղի շրջանում:

Թուրքական սպանութիւններին՝ հայերը անպատասխան չեն թողնում: Արդար պատիժն է միայն, որ սանձահարում է թուրքերի գրգռւած անորոշութիւնը: Ոստիկանութիւնը շարունակում է դաշնակից լինել թուրք բէգութեան:

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ը

ԵՐԵՍՈՒՆ ԶԻՆԳ ՏԱՐԻ ԱՌԱՉ

Սա մի պաշտօնական փաստաթուղթ է, գրւած դեռ այն ժամանակ, երբ հայկական յեղափոխութիւնը չէր պարզել իր մարտական դրօշը, և օրւայ նշանաբանը՝ դեռ ամենահպատակ աղերսներն էր ու ամենախոնարհ խնդրւածքը: Պաշտօնական թղթին յատուկ մեղմութեամբ խնդրւածքը այս «Տեղեկագիրը», որ 70-ական թւականների հայկական տանջանքների դիւանագիտական չափաւոր արտայայտութիւնն է, և պիտի մնայ իբրև անհրաժեշտ ու վճռական հարւած այն քաղաքական շարժման, որը ամբարտաւան յամառութեամբ, նոյնիսկ մեր վշտի ծանրագոյն բողոքներին, փորձուած է հայկական հաւաքածանքի պատճառը հայկական յեղափոխութիւնը համարել:

մինչդեռ այն հարածանքի սիրիցը շատ հին է և շատ վաղուց ձեռակերտած...

Գոսկումները տպագրում ենք նոյնութեամբ, առանց որևէ փոփոխանքի:

Ա. Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ Ի

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ

Ներկայացնալ առ Բ. Դուռն յամուսն Ազգային ժողովոյ

Ի 11 ապրիլի 1872.

Այլևայլ ժամանակներ, մասնաւորաբար վերջին 7—8 տարւայ միջոցին, Անատոլոյի ներսերը պատահած ցաւալի դէպքերը, որոնց համար Ազգային Պատրիարքարանս գրեթէ Բ. Գրան գանգատած և անոր ուշադրութիւնը և դարմանատրուութիւնը ենդրած է, այնքան բազմացան, և այս մասին Առաջնորդաց գանգատներն այնչափ ընդհանրացան, որ Ազգային Ընդհանուր Ժողովն 1870 նոյեմբեր 27-ի նստին մէջ յատուկ Յանձնաժողով մը կազմեց, այդ ցաւալի դէպքերը քննելու և մանրամասն տեղեկագրելու համար:

Յանձնաժողովը յատուկ շրջաբերականներ ուղղեց առ ամենայն Առաջնորդս, որ իրենց գաւառի վիճակին և ցաւոց վրայ մանրամասն և ճիշդ տեղեկութիւններ տան, զգուշանալով ամենայն չափազանցութենէ, և ցաւոց դարմանին վրայ ալ կարծիքը հաղորդեն:

Յանձնաժողովը՝ հասած առաջնորդական տեղեկագրութիւնները և Ազգային Պատրիարքարանի 20 տարւան արձանագրութիւնքը մանրամասն աչքէ անցնելով, և պատմած դէպքերը մանր հետազոտութեամբ քննելով՝ ստուգութիւնը բազում ապացոյցներով հաստատած եղելութեանց վրայ յիմնելով՝ իր Տեղեկագիրը պատրաստեց:

Տեղեկագիրը մատուցեցաւ Ազգային Ընդհ. Ժողովին, 1871 հոկտեմբեր 8-ին, այնպիսի ժամանակի մը մէջ, յորում Վասյերական բարեխնամ Վառապարութիւնդ արդէն ուշադրութեան առած էր կայսրութեան ներքին ընթացքը, պաշտօնէից վիճակը, և մասնաւորաբար Անատոլոյի գաւառաց վիճակին քննութիւնը, նորընտիր յատուկ գործակալաց ձեռքը:

Ասանկ թարեպատեհ ժամանակի մը մէջ մեր Ազգն ալ որպէսզի ըստ կարի օժանդակ գտնէի մեր Օգոստոսփառ Վասյեր արթուն և լուսամիտ պաշտօնէութեան ձեռք առած այլ և այլ բարեկարգիչ միջոցներուն, կը փութայ Ընդհ. Ժողովոյ մատուցեալ տեղեկագրին գլխաւոր պարունակութիւնները՝ նոյն ժողովին 1872 փետրւար 18-ի նստին յայտնած ընդհանուր կամքին և որոշմանը համեմատ՝ բարեխնամ Վառապարութեանդ ուշադրութեանը ներկայացնել:

Այլևայլ զեղծմանց և անկարգութեանց վրայ ժողովրդեան ստէպ ստէպ գանգատներէն կ'ստուգելի և և կը հաստատուի թէ՛ տեղ տեղ մանաւանդ մայրաքաղաքէս հեռու և յարաբերութեան մասին դժարութիւն ունեցող գաւառաց կայսերական պաշտօնեայք Ղևհ. Սուլթանին կամաց և հրամանաց և երկրին օրինաց հակառակ ընթացքի մէջ են, որոնց թոյլտուութեամբ կամ անհոգութեամբ շատ անգամ կրօնական խտրութեանց և մոլեռանդութեանց աղետալի անցքեր կը պատահին. արքունի շինածոց համար մար-

դիկ անկարեայի կը բռնուին. դրամական պահանջումներ կըլլան. ճանապարհաց շինութեան պատրուակած ժողովուրդը կը կեղեքուի. հպատակ ազգաց՝ մանաւանդ մեր ազգէն անջատեալ հայոց և մեր մէջ բաժանման և երկպառակութեան տարբերքները կաճին. կանայք և անչափահաս մանկունք բռնի մահմեդականութեան դարձնելու ջանքեր կըլլան: Գարձեալ՝ սոյն պաշտօնէից անհոգութեամբ արքունի տրոց բաշխման և հաւաքման մէջ զեղծմունք կը գործուին. աս կէր պիտելի է տուրքը մեռնողի և գաղթողի կամ բոլորովին անյայտ եղողի բաժինն ալ մնացեալներէն կը պահանջուի, որով վճարումն անկարելի եղած պագաս էր մնալով կը ծանրանան այլևայլ գաւառաց մէջ:

Այսպէս նաև է մ'լ ա գ և թ է մ է տ ա ի ւ տրոց մասին անարգար բաշխում և հաւաքում կըլլայ, որ բազմամասն ոչ մահմեդականաց վրայ աւելի ծանրացած է՝ քան թէ մահմեդականաց: Վերջապէս տրոց հաւաքման պատրուակաւ աղքատին անհրաժեշտ կահարասիքն ու գործիքը բռնի ծախելու և զանոնք բանտարկելու խտրութիւններ ի գործ կը դրուին:

Իսկ Միւլթէզիմներու համար եղած գանգատներն ընդհանուր են: Այս մասին գանգատները միաբերան կը հաստատեն թէ եղած զեղծումները այն պէյեւրէն կամ կառավարութեան ժողովոց այն անդամներէն են, որոնք օրինաց հակառակ չը գործելու համար՝ իրենք վարձակալութիւն (իլթիզամ) չեն ընել, այլ իրենց տղայքը կամ սպասուորները կամ այլ ծանօթները:

Օրէնքին արգելքը բաւական է հասկցնել թէ՛ երբ այսպիսի չարաչար գործածութեան ճանապարհ մը գտնւած է, ժողովուրդն ինչ ձեռքերու տակ կը մնայ աղքատը որչափ անիրաւութեան տակ կը ճնշուի զինքը հարստահարողէն: Այս տեսակ Միւլթէզիմները գիտնան իսկ պիտի փնտրեն, չեն վախնար. զի փնտրելու հանելու միջոցներն ունին, աղքատը կեղեքելով և չափազանց գիններ զննելով անոնց բերքին վրայ:

Այսչափ ցորեն կամ բամբակ կուտայ այս արտը, այսչափ դրամ պիտի տաս կըսեն, (դրամ կ'առնուն և ոչ բերքին տեսակէն, և այն ալ, պղինձ դրամ չեն առնուր), եթէ բերքին տէրը դժկամակի տալ, միւլթէզիմն ալ աւելի կը հակառակի և բերքն երեսի վրայ կը թողու (զի մինչև տասանորդը չառնելի՝ բերքը իր շտեմարանը չը բարձելի), որ կրնայ շատ փնտնելու ենթակայ ըլլալ, ապա առաջի ուղած տասանորդին կըրկնապատիկը կը պահանջէ ու կ'առնու:

Տան պիտոյից համար տան պարտիցի մէջ ցանւած բերքին վրայ ալ տասանորդ կը պահանջուի:

Եթէ բերքին տեսակէն տասանորդ առնուի, նոյն իսկ բերքին տիրոջը բառնալ կուտան առնւած տասանորդը և խեղճներն օրերով կը սպասեն պէյեւրիկ աս պարի ին դուռը, որ բերքը չափուի ու վերցուի:

Վը գանգատին նաև թէ միւլթէզիմները հնձոց ժամանակ չեն դար, շատ անգամ մինչև այն ատեն տասանորդը ծախւած չըլլալուն համար կառավարութեան կողմէ ալ մէկը չը գար, և այնպէս բերքն երեսի վրայ կը մնայ ու կը փութի, և հուսկ ուրեմն կուգան և այն փնտնեալ ու փտեալ բերքերուն համար ողջի արժեքով դրամ կը պահանջեն:

Այս պարագային մէջ գեղապետաց օգնութեամբն

աղքատն ամեն տեսակ տառապանաց կենթարկելի, դատի կը բաշխուտի, կը տրորուի, կը բանտարկուի: Միւլթէզիմներու հետ գաղանի ընկեր եղող պաշտօնեայք անոնց շահուն միայն կը ծառայեն, և խեղճ հողագործը ճարահատեալ՝ իր ունեցածը վրայ կուտայ, և տակաւին չկրնար միւլթէզիմին ձեռքէն ազատիր:

Չմրան մօտ՝ և երբեմն ի մէջ ձմրան, միւլթէզիմներուն ի գիւղօրէս ելնելէն խիստ փնասակար արդիւնքներ յառաջ կուգան: Գիւղացին պարտաւոր է ձրիաբար կերակրել միւլթէզիմն և անոր գործակալները, որչափ ժամանակ որ հիւր մնան իրենց գիւղը, անոնց հաւնեցնելու եղանակաւ, երբեմն ալ կը ծեծուին և երբեմն ալ կանանց պատիւ կարատաւորուի:

Ղերջին ատեններս քանի մը գաւառներու մէջ հողագործաց եզանց լծերն ալ գրւել և ի գլուխ մէկ լծոց երկու կոտ, այն է չորս լիար ցորեն առնելու է տասնորդ և կարի խստութեամբ, բանդի անոնք որ ցորեն չունէին, բռնապատուելու են զրամով գնել քաղաքացիներէն և վճարել:

Հասնալը կամ էօլէէք հագգը ըսւած արգելեալ տուրք մ'ալ կայ, որ բերքին 1/10-ն է, երբեմն ալ աւելի, զոր հողագործը եթէ չը տայ՝ շահնան շատ փնասներ կը հասցնէ անոր:

Այս գանգատներն աւելի ծանր են այն գաւառաց մէջ, յորս պէ՛յ կամ աղա կամ քիւրդ բռնաւորներ կան, և անոնք ալ կամ իշխանութեան մէջ են, և կամ իշխանութեան առջև ազդեցութիւն ունին:

Բարեխնամ կառավարութիւնդ արդէն տեղեակ ըլլալով գաւառաց խորերուն մէջ պատահած այսպիսի զեղծմանց, նոր և ազդու միջոցներ ձեռք առած է բարեկարգութեան հաստատութեանը և ժողովրդեան բարօրութեանը համար: Եւ արդարեւ՝ ձեռք առնւած միջոցներուն մէջ ամենէն ընտիրը կը համարուի այն դրութիւնը՝ որ քօնթրօլ մ'է տեղական կառավարութեանց դէմ, որ յատուկ ժուրնալճիներու ձեռք կատարել կը փորձուի առաջին անգամ: Այս դրութիւնն իր օգուտները պիտի մատակարարէ կառավարութեան և երկրին ժողովրդեան: Միայն թէ այս ընչութիւնը օգտակար ըլլալու համար հարկ է որ ժողովուրդն անվախ ըլլայ իր ցուերն անկեղծութեամբ խօսելու և այս անվախութիւնն ալ կառավարութեան ձեռք առած և առնելիք միջոցներէն կրնայ գոյանալ, երբ յանցաւոր ո՛րէ գաւառական պաշտօնեան անմիջապէս պաշտօնէ ձգուի և պատժուի, իսպառ մերժելով զայն ի պաշտօնէ: Այս անդրդեցիլի կամքը վերջին անգամ փորձով տեսնելով, մեծ յոյս կուտայ կայսերական կառավարութեանդ բոլոր հաւատարիմ ժողովրդեան թէ հետզհետէ մեծամեծ բարիք վայելելու և իրենց ցաւերը մոռնալու արժանի պիտի ըլլան, շնորհիւ Ղեհ. կայսեր և անոր արժանընտիր պաշտօնեութեան:

Այս մասին բարեխնամ կառավարութեանդ ունեցած հայրական բարի դիտաւորութեանց ճշտիւ գործադրութեան հսկելու համար մեծապէս կրնան նպաստել նաև մեր Ազգին գաւառական վարչութիւնները և անոնց առաջնորդները, որոնց գանգատները թէ՛ ուղղակի տեղական կառավարութեան և թէ՛ Պատրիարքարանի թագրիներուն միջոցաւ բարեխնամ կառավարութեանդ ներկայացած են և կը ներկայանան միշտ:

Սակայն ասկէ յառաջ գործածուած իսթիլամի եղանակը մեծապէս աննպաստ էր ժողովրդին ցաւոց դարման ըլլալու մասին, վասնզի՝ յայտնի կերևէր թէ ժողովուրդը որչափ վախ ունէր տեղական կառավարութեանց վրայ գանգատելէ, կամ թէ որ գանգատէր, իսթիլամի մէջ յետս կոչելու, կամ սխալ տեղեկութիւն հաղորդելու կը պարտաւորէր, զի իսթիլամը բուն իսկ այն կառավարութեանն կը ըլլար, որմէ էր ժողովրդեան գանգատը: Այս անպատեհ եղանակը՝ որ այժմ ժուրնալճիներու դրութեան հաստատութեամբ բարձուած կը յուսացուի, ոչ միայն տեղական կառավարութեանց վատթարանալուն կը ծառայէր, այլ շատ անգամ արգելք իսկ կը ըլլար այն տեղական կառավարութեանց՝ որ ժողովուրդն աղէկ հոգալու և աղքատը պաշտպանելու ջանք կուզէր ցուցնել: Այս արգելքն յարուցանողներն եղած են միշտ իւրաքանչիւր գաւառի համար տեղացի բնիկ մեծատունք, որոնց ղորութեանն ազատ կամ ղերձ՝ կառավարութեան գլուխ մը կամ այլ պաշտօնեայ թերևս եղած չէ, կամ թէ որ եղած ալ է նէ, շուտ հասած է անոր անկումը տեղացի բնիկ մեծատանց միաբանութեամբը. վասն զի՝ կառավարութեան պաշտօնէից համար աղէկ կամ գէշ վկայութիւն տուողներն իրենք եղած են միշտ: Որչափ որ այս բնիկ մեծատանց ազդեցութիւնը չափաւորուած կը համարուի գաւառական կառավարութեանց թէ՛ շքիւլութի եղանակաւ, դարձեալ այդ ընտրութեան եղանակը հիմնապէս անոնց կը ծառայէ. թէ՛ ֆրիք Մեճլիսին կը բաղկանայ Միւլթէսարըֆէ, Հաքիմ էֆէնտիէ, Թահարիթ միւտիթիէ և ոչ-մահմետական ժողովրդեան գլուխներէ, որոնք ուղածնին ընտրելեաց ցանկը կրնան անցնել. և այս ցանկն ալ փակեալ ըլլալով, կառավարութեան պաշտօնէից խորհրդակցութիւնը սահմանեալ մարդոց առանձնաշնորհութիւնն եղած է միշտ և կը մնայ այնպէս: Օրինաց այս սրամադրութեանն տեղացի բնիկ մեծատանց շատ օգուտ չը քաղելու միջոցը բարեխնամ կառավարութեանդ բարձր հոգածութեանց արժանի նիւթ մ'է, և այս առթիւ Պատրիարքարանն սա խնդիրը միայն կը համարձակի աւելցնել թէ թէ՛ ֆրիք Մեճլիսին պատրաստած ընտրելեաց ցանկն աւելի ընդարձակութեան կարօտ է. կամ թէ՛ ֆրիք Մեճլիսին կազմութիւնն աւելի ժողովրդեան և աղքատին նպաստաւոր եղանակի մը վերածել պէտք է. և ինչպէս Առաջնորդաց ներկայութիւնն հարկաւոր է, նոյնպէս առանց անոնց ներկայութեան կամ հաւանութեան՝ ընտրելեաց ցանկ չը պատրաստուի, և իւրաքանչիւր ազգի ընտրելիներն ալ կանխաւ ազգային ներքին ժողովոց խորհրդակցութեամբը պատրաստուած ըլլան:

Փորձը կապացուցանէ թէ ձեռք առնւած ազդու միջոցներէն ամենէն աւելի ղորաւորն արդարութեան ճշտիւ կիրառութիւնն է, և պիտի ըլլայ միշտ. երբ կառավարութիւնդ կը բնէ, կը դարմանէ և ապագային ապահովութեան համար կը պատժէ, տարակոյս չը կայ թէ բարձրացած նպատակին պիտի հասնի: Ուստի երբ գաւառաց մէջ առաջնորդները որևիցէ զեղծման մը վրայ բողոք կամ գանգատ ունենան տեղական կառավարութեան, և այն ուշադրութեան առնել, և կամ եթէ Պատրիարքարանն գանգատ կամ բողոք ունենայ

առ Բ. Դուռն, թէ՛ կառավարութեանդ և թէ՛ Պատ-
 ըրիարքարանիս կողմէն լիազօր քննիչներով քննութիւն
 ԸԼԼայ, կամ իհարկին քննութիւնը ի Պօլիս փոխադրելի
 մեծ և իրական արդիւնք ձեռք բերել հնար պիտի
 ըլլայ, այսպիսի ազգու միջոցներով: Մանաւանդ պէտք
 է որ Բ. Դրան հրամանագրերն Վիլայէթի պաշտօնա-
 կան լրագրաց միջոցաւ հաղորդելին ի տեղեկութիւն
 կան լրագրաց միջոցաւ հաղորդելին ի տեղեկութիւն
 Գրեւի մնալու և կամ թերի գործադրելու վիճակէ
 գերծ ըլլան. և հպատակ ազգաց գլուխները և նոյնիսկ
 անհոգ ԸԼԼան. որոնց պաշտօն տրւած է Բ. Դրան
 այն ժուրնալձինները, որոնց պաշտօն տրւած է Բ. Դրան
 հրամանագրերուն գործադրութեան վիճակը բնեւ ժո-
 ղովրդական աղբիւրներէ, կարող ըլլան անոնց վրայ
 հսկելու և անոնց գործադրութիւնը պահանջելու: Այս-
 պէս նաև հարկ է Տիւսթուրըն ալ ամեն ազգաց լեզ-
 ւին վերածել թարգմանութեամբ: Ռամիկ և սոքէտ
 մարդոց մէջ կրօնական խտրութեան առիթներով ծա-
 քած գծտութեանց մէկ գլխաւոր առարկային նւաղման
 ոչ սակաւ պիտի նպաստէ, եթէ օրէնքը կրօնափոխու-
 թեան դիմողներու համար որոշ տրամադրութիւններ
 պարունակէ, մանաւանդ կնիկ մարդոց համար. ան ատեն
 այս մասին եղած բազմադիմի դանդաղները վերջ կը գտ-
 նեն, և կրօնափոխն իր ազատ համոզմանը տէր կը ըլլայ՝
 որ արդէն բարեխնամ կառավարութեանդ ընդունած
 ազատ սկզբունքներէն մէկն է:

Այսպէս օրէնքի մը հարկաւորութիւնը կը նկատուի,
 կրօնափոխ արանց իրենց կնոջ և զաւակացը ն ա ֆ ա
 գ ա մը վճարելու մասին:

Եթէ բարեխնամ կառավարութիւնդ ազգու միջոց-
 ներով գաւառական կառավարութեան պաշտօնեաները
 հսկողութեան ներքեւ առնու, այն ատեն ա Ր Գ ա Ր ու
 թիւնը բարձր ի գլուխ պիտի պանծայ, և անով
 շատ մը գանգաւանքու աղբիւրը պիտի չորանայ. ար-
 քունի տրոց նկատմամբ եղած զեղծմունք պիտի բարձ-
 ւին. տրոց բաշխումն և հաւաքումը արդարութեան
 վրայ հիմնել կարելի պիտի ըլլայ, և մանաւանդ եր-
 կիրը պիտի ազատի միւլթէգիմներու երեսէն, որ այսօր
 հոգեւորք վիճակի հասած է. բարեխնամ կառավարու-
 թեանդ շնորհիւ պիտի սկսի նոր կենդանութիւն զգե-
 նուլ այս մայր արուեստը՝ որ Արեւելցւոցս միակ ար-
 ւեստ մնացած է, և բնութիւնն ալ զայն զարգացնելու
 միջոցներով օժտած: Այս մասին մեծապէս պիտի նը-
 պաստէ անվճարելի պագայէներուն և հողագործներուն
 ուրիշ կարևոր ապահովութիւններու շնորհումը, որ
 բարեխնամ կառավարութեանդ ձեռնհասութեանը կը
 պատկանի:

Ուրիշ դժբախտութիւն մ'ալ կայ որ ոչ նւազ ցա-
 ւալի հետեանքներ ունեցած է և կունենայ միշտ. այն
 է՝ ոչ-մասնատեղական վկայութեան չը բռնելը: Աւե-
 լորդ է ըսել թէ այս պատճառաւ ո՛րչափ առևանգու-
 թիւնք, յափշտակութիւնք, գողութիւնք, նա մանաւանդ
 սպանութիւնք անպատիժ մնացած են կամ անյայտ,
 նոյնիսկ կառավարութեան ջանիցն հակառակ. տարա-
 կոյս չը կայ որ եթէ բարեկարգութեան շրջապատակին
 տրամադրութեանց համաձայն՝ կալածական, առևտրա-
 կան և ոճրագործական դատերն անպատճառ (հէր
 հարէ) նիզամի ատեաններու մէջ քննելն, բարեկար-
 գութեան հաստատութեանը, հարստահարութեանց և
 շատ տեսակ զրկանաց բարձման ծառայելէ զատ, հա-

ւասարութիւն ըսած սկզբունքը պիտի իրականացնէ,
 Դարձեալ ամենացաւալի հարկի մը մէջ կը գտնուի
 գանգաւանքու բիւրդերու և այն լեռնցի ցեղերու դէմ՝
 որոնք վրանաբնակ ըլլալով՝ ամեն ազգաց մանաւանդ
 կառավարութեան գանձուն ալ մեծապէս փաստակար
 են: Ասոնք զէնք կը կրեն, կառավարութեան ոչ տուրք
 կուտան ոչ ալ զինուոր, և ապստամբ են, մինչդեռ
 միւս ժողովուրդներն անզէն են և կառավարութեան
 սուրբ և զինուոր կամ պէտէլ կուտան, աւելի տուրք
 մ'ալ այդ ապստամբներուն տալու պարտաւորու-
 թեամբ: Այս հարստահարութեանց ներքեւ առևակ
 կը գտնուին Նրդուրմի և Տիարպէքլիի վիլայէթները, և
 անոնց մէջ Մուշ, Վան, Բիլի, Գուզուլջան, Գերբան,
 Բաղէշ, Չարսանձագ, Սղերտ և այլն:

Այսբարեկան բարեխնամ կառավարութիւնդ արդէն
 հրատարակեալ խաթիբ Հիւսայուններով ժողովրդեան
 կենաց, ընչից և պատուոյ ապահովութեան պիտոյը
 ձանձցած է, որ ըստ այնմ երկիրը բարգաւաճի և
 զարգանայ, սակայն ցաւօք սրտի կը տեսնուի որ գաւա-
 ռաց, մանաւանդ վերոյիշեալ գաւառաց ժողովուրդը
 քիւրդ և այլ լեռնցի ցեղերու աւաղակութեանց և
 յափշտակութեանց և սպանութեանց ենթակայ եղած
 է: Ժողովուրդն այսպիսի կեղծմանց ներքեւ անհնար է
 որ կարող ըլլայ աշխատել, աշխատել այնպէս ինչպէս
 որ երկրին բարգաւաճումը կը պահանջէ:

«Երկրի մը յառաջադիմութեանը և հարստութեանը
 միջոց ժողովրդեան աշխատութիւնն է», ինչպէս որ
 բարեխնամ կառավարութիւնդ ժուռնալձիններու հրա-
 հանգին մէջ նշանակած էր. «յամեն յառաջադիմու-
 թեան հիմն եղող աշխատութիւնն ալ այն ատեն կա-
 րելի է, երբ աշխատողն իր աշխատութեանց արգասի-
 քը կ'ատարեալ ապահովութեամբ վայել-
 լելու վստահ ըլլայ. մարդս բնականաբար իր վիճակը
 բարեկարգելու և իր հայրենեաց բարօրութիւնը փնտ-
 րելու անընդհատ միտում ունի, մարդուս այս բնական
 միտումն այն ատեն կեղծանի, երբ տեսնէ որ իր աշ-
 խատութեանէն իրմէ աւելի ուրիշներն օգուտ կը քա-
 յեն»: Վասն որոյ երկրին յառաջադիմութեանը և հա-
 ըստութեանն արգելք եղող այս բիւրդերուն և այլ
 լեռնցի ցեղերուն և տէրէպէյիներուն մասին ըլլալիք
 քննութիւնները դիւրացնելու համար Պատրիարքարանն
 կը փութայ ծանուցանել թէ, արդէն Պատրիարքարանն
 մանրամասն ցուցակն ունի այդ ապստամբ անձանց գլ-
 խաւորներուն և այլ պաշտօնէից ոմանց, և 20 տարի
 հետէ անոնց երեսէն ժողովրդեան կրած տուա-
 պանաց և չարքարանաց ստակալի նկարագիրներով իր
 դիւանը լի է, ո՛ր ատեն բարեխնամ կառավարութիւնդ
 բարեհաճի ուղել, պատրաստ է տալու թէ՛ անուններ
 և թէ՛ գործոց նկարագիրները:

Մինչ ցարդ Պատրիարքարանիս այս մասին մատու-
 ցած խնդրագիրներն ըստ մեծի մասին անգործադրելի
 մնացած են, վասն զի ձեռք առնւած միջոցներն ան-
 բաւական եղած են: Բարեխնամ կառավարութիւնդ
 անգամ մը Մշոյ սահմանակից քրդաց զխաւորները
 ձերբակալելով՝ նոյն երկրէն հեռացոյց, և ասով ժո-
 ղովրդեան աշխատութեանը մեծ դիւրութիւն ընծայէ
 սակայն այդ աքսորեալ գլխաւորներէն ոմանք սկսած
 վերագաւնալ նոյն երկիրը, որով աւելի ևս կենդանու-
 ցաւ և զրգուեցաւ ասոնց բարբարոսութիւնը:

Այս դասն վիճակէն ազատելու հնարը բարեխնամ կառավարութեանդ ձեռք առնելիք ազու միջոցներէն կախուած ունի միայն, երբ այդ քիւրդ և այլ լեւոնցի վրանարնակ ցեղերու թօռուէն երբ հնազանդութեան ներքեւ առնուին որեւէ եղանակաւ, և իրենց իշխանութեան ներքեւ գտնուող հասարակ քիւրդերու և այլ ցեղերուն ձեռքէն զէնքն առնել և գիւղաբնակ ժողովրդոց կարգը դասուին, մաճ կամ հովական ցուպ տրելի անոնց ձեռքը փոխանակ զինուց: Եւ տարակոյս չը կայ թէ բարեխնամ կառավարութիւնդ իր այս բարերար կամայք գործակից ըլլալու պատրաստ պիտի գտնէ նաև տառապեալ տեղացի բնիկ ժողովուրդը, մանաւանդ մեր հուսատարիմ ազգը, ինչպէս որ ուրիշ տէրէպէլիներ կամ լեւոնցի բռնաւորներ նաւաճելու միջոցին մերայնոց ծառայութիւնն ապացուցած է:

Այս մեր ազգայինները շարունակ հարստահարող քրդաց ձեռքէն զէնքն առնելի, կամ իրենց կեանքը, պատիւը և ինչքը հարստահարողներու դէմ ինքզինքնին պաշտպանելու վիճակի մէջ դրելին: Յուսալի է թէ բարեխնամ կառավարութիւնդ այնպիսի վերջին տնօրինութիւն մը ձեռք կառնու, կայսերական բանակին բաժութիւնը անմիջապէս քրդաց դէմ բանեցնելով և հարստահարեալ դաւառաց մէջ զօրաւոր ոստիկանութիւն մը հաստատելով, ինչպէս որ իրաւունքի մէջ սովորութիւն եղած է, մեր ազգայիններն ոստիկանութեան մեծ ու պատիկ պաշտօնեաներուն մէջ ընդունելով այսպիսի կենսական պարագայից մէջ միայն՝ հաւասարութեան սկզբունքը ժողովրդեան աչաց առջև կըրնայ իրականանալ:

Ինչպէս հարապատ որչի մը իր վիշտերը կը յայտնէ իր հօրը և օգնութիւն ու դարման կը խնդրէ, նոյնպէս և մեք մեր ազգին ցաւերը մեր առատագութեան թուլութիւնն բարձր և հայրական կառավարութեանը ներկայացնելով, անմիջական և ազգու դարմաններ կը խնդրեմք: Ինչպէս է որ մեծ ցաւերը մեծ դարմաններու կը կարօտին:

Պատրիարք Կ. Պօլսոյ

ՄԱՐՏԻՉ ԱՐՔԵՊ. ԽՐԻՍՏԵԱՆ

(ԿԵՂԻ)

Թ Ե Ր Թ Օ Ն

ԿԵՆՊԱՆԻ ԹԱՂԻԱՇՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ (Թիւրքական բանակ)

III

Կեղևանուր Կեղևանուր, Խաղեր առաջին աշխարհի հանգիւյ, Հարցաւորութեան արդիւնքով պիտեմք, Խոստովանողներ, Մի ինտերօրիսակ, Կապիտանայանքի ին:

Երբ հարիւր հազար հայերի արեան գնով, սուլթանը բնիկնեց հայկական շարժումը և անցած կարճելով հայրական ավանանայի պատանայող արեւականը, որպէս զիջումն զիւրապետական պահանջներին, ընդհանուր և քրդաց հայ քաղաքական բանաստեղծներին: Հարաբար հայեր ազատութիւն ստացան: Բայց դա շատ կարճատեւ եղաւ: Հաջիւ մի ամիս բանակը թափուր մնացին քաղաքական բանաստեղծներին: Թիւրք պաշտօնեաները՝ Պարսից եկած հրամանի համաձայն՝ մի ձեռքով ապստամբներ՝ միւս

ձեռքով ժողովել սկսեցին: Բանտերի դռները նորից բացուցան և նորից հատ-հատ, խուճ-խուճ սկսեցին դալ սուլթանի անհատաւորի մահը:

Վերջին ընդհանուր ներումը 1897 թւի դարնան էր, արտ ամսին: Նոյն թւի ապրիլի 7-ին Մարտի բանտում 32 հայ քաղաքական յանցաւորներ կային՝ Զէյթունից և նրա շրջանից, Ալպիստանից ու Մալաթիայից: 22 օր միայն բանտը պարսպ մնաց հայերից: Նոյն դուրսեան մէջ էին բոլոր հայաբնակ քաղաքները: Իրանից յետոյ ընդհանուր ներումն այլևս չ'եղաւ, որովհետև սուլթանը տեսաւ, որ ազատութեան կրակը դեռ չէ հանգած հայկական լեւոններում, բայց դրսի աշխարհին խաբելու համար նա մի-երկու անգամ 1900—1901 թւերին մասնակի ներումներ տեց այնպիսի վայրերում, ուր վտանգը մտաւոր չէր և այն էլ՝ միևնոյն շրջանի հատ-հատ քաղաքներում և ոչ բոլոր բանաստեղծները համար թիւրք քաղաքականութիւնը դիտէ լաւ բնաւորութիւն անել նման պարագաներում: Բաւական է, որ Պօլսի թերթերը յայտարարեն. «Շնորհիւ վեհ սուլթանի՝ Երզրումի, Ամսի, Բիթլիսի նահանգներում բազմաթիւ հայ քաղաքական բանաստեղծներ ազատ արձակեցան», իսկ այդ լուրը հեռագրներով եւրոպական մամուլին հասնելով՝ հանգստացնէին հայկական խնդրով շահագրգռուած դիւանադէտներին: Խաղը շատ լաւ էր սարքուած՝ Թիւրքիայից դուրս թող զիջելու, իսկ ներքը խեղդելու ամեն մի ձայն, ամեն մի ձիգ:

Սակայն բոլոր վտանգները դուր են անցնում: Հայկական ազատութեան միայն նորից ծայր է առիտ, թիւրքը չի թողնում է, ինչ անելը չը դիտէ. միակ միջոցը բանտն է և նա յ րատուում է անվերջ: Օսմանեան կառավարութեան պաշտօնեաները հասկանալ չեն կարողանում, թէ այս ինչ տեսակ ցեղ է, որ ոչ իս ամեն է ըմբռնում, ոչ պատիժն զգում, ոչ էլ կոտորելով՝ անյայտանում աշխարհի երեսից: «Նե տարրը միլէթէ չաթաքը, այդքան շարճեցինք, այսքան անմիջեցինք, նորից մեր բանտերը լցում են դրանցով, դուրս է Լւլայ-բէյը կամ քիւրդները և հրամայում բանտային պաշտօնեաներին աշխարհ լինել, որ նոր եկածները միմեանց հետ չը տեսնեն և ոչ սքի հետ յարաբերութիւն չ'առնեն, մինչև քննութիւնների վերջնալը»:

Այժմ վերաբերմունքը սարքեր է: Թէ՛ թիւրք ամբողջ և թէ պաշտօնեաները վարժեւել են լսել, որ հայը բողոքում է, դժգոհ է, որ հէնց դրա համար էլ պիտի բանտարկուի, պատժուի օրէնքով: Բաւական է, որ նա ակտիվ գործի մէջ չէ եղել այլ յանցաւոր է մի յիշի, մի նամակի, մի երգի պատճառով: Ընդհանուր է, նա նորից իս յին է, բայց նրան մինչև մահան դուրս հասցնելու կարիք չի դրացում: Սարսափը համատարած չէ: «Յեղափոխութիւնը շահախախտ է», մի քանի պարսիկ էր՝ ևն միայն, որոնց հետ յարամանութեամբ, կեղծաւորութեամբ վարուելով կարելի է ինչիւր հասկանալ շարճի առաջն առնել:

— Կուգում, արդւմ, — այսպէս է սկսում քաղցրախօս բերնաշին կամ կոմիտէրը, դու երիտասարդ ես, չը դիտես օգուտդ. դու անմեղ ես: Քեզ բերել ենք միայն հայր ու վտանգի համար: Մի՛ վախենար, հէնց վաղը բայց կը թողնենք: Բայց հարկաւոր է, որ ամեն ինչ ճշտութեամբ պատմես: դու արդ զորքում վիպ կը ներկայանաս, քո ցուցմունքը կը տաս և կը թողնես զորքից կ'երթաս: Մերտուր ամեն բան յայտնեց, նա ասաց որ դու էլ գիտես այդ բոլորը, ինչն է և թողնում: դու էլ պատմիր, ինչ գիտես նրա մասին: Գիտենք, որ նա է ամեն բան անողը, առանց քո վիպութեան էլ նա արդեն մեղաւոր է. բայց ես քո մասին եմ ուղածում, չեմ ուղածում, որ դու էլ պատմիր. գիտցած եղիր, լուրձիւնը յանցանքի նշան է: Եթէ միշտ առես չըր գիտեմ, ես տեղեկութիւն չ'ունեմ», դու իբրև յանցաւոր որ փաղիշահին հարկաւոր եղած տեղեկութիւնները զլանում ես յայտնել կը դատաւարուես: Աս ասում եմ բեզ ամեն ինչ, որ լաւ կըսես քո շարն ու բարին ու

* Թիւրքիայի մի բանի սեյրում. ի միջի այլոց ամբողջ կիլիկիայում, հայ յեղափոխականներին յնդհանուր՝ անուկով Պարսն ևն անուկում:

զո՞ւմ ես աղաւել ու տուն երթալ, արա, ինչպէս ես եմ ստում»:

Այս սովորական խորամանկ քարոզներն են, որ գործ են դրւում ամեն տեղ և դրանցով էլ շատ շատերին թակարդ ձգում: Բաւական է, որ խնդրի ծայրը դուրս եկաւ, այլևս պրծնումն չը կայ: Արքան շատ խոսեց, որքան շատ տեղեկութիւններ տւեց, այնքան էլ շատ է յանցանքը, այնքան կու՛ր շատ տարիներ կը հագցնեն նրան»: 101 տարին սովորական է, երբ մէկը իր բերանով խոստովանի իր մի անմեղ քայլը, օրինակ յեղափոխական մի երկու բառ պարունակող նամակ ստանալն ու մի ուրիշին յանձնելը: Չէ՛ղումը վերջն է լինում, բայց արդէն ուշ է: Աերջն է, որ թակարդ ընկածը գլխին ու ծնկերին է տալիս, բայց այդ ոչնչով չէ օգնում:

Եթէ դիմացինը տատանւող է, փորձում են խաբել այլ միջոցներով: Իսկոյն պատահում են լաւ սննեակում հիւրասիրել, փափուկ անկողին տալ, փաշայի անից կերակուր տանել, եթէ դրամ է ուզում, այդ էլ չը խնայել: Եւ այդ ձևով շատ շատերին են կարողանում խօսեցնել տալ նայն իսկ իր ընկերներին մտնել չը դարձնել: Եւ մինչդեռ թշուառականը այդ զոհողութիւններն յանձն է առնում միայն իր կաշին ազատելու յոյսով: Թեկուզ դրս համար ծախած ինի իր գաղտփարական ամբողջ կեանքը, վերջը դուրս է գալիս, որ նա ոչ միայն մասնիչի ու անունն է ժառանգում, այլ և հակառակ իր երազների, դատապարտում է և պատժում ամենածանր կերպով: Մի մարդ, որին ոչ ոք երես չի տալիս, որի հետ ոչ ոք խօսել չի ուզում, մի մարդ, որ կրում է իր մեծ յանցանքի պատիժը— իբրև դատաւար իր ընկերների, իբրև ուրացող իր թերևս մի ժամանակ փայփայած գաղտփարների:

Մի բնորոշ օրինակ: Մի բնորոշ օրինակ մի երիտասարդ, 1899 թւի յունիսի սկզբին, ձերբակալում է Ալէքսանդրէտում՝ արասահմանից մի նամակ ստանալու և Չէյթուն ուղարկելու մեղադրանքով: Մարտ փոխադրելով, ենթարկում է քննութեան հէնց այն ժամանակեայ միւլթեսարքի՝ Արա-Մուրսու Չուգէ փաշայի կողմից: Փաշայի կեղծաւոր, նենգ ու քաղաքավարի վերաբերմունքը և ամեն տեսակ դիւրութիւններ և խոստումներն տալը այնքան են քաջարկում է յուսադրում անհետապահ կարգաւորին, որ նա ոչ միայն յայտնում է նամակի ինչ լինելը, ուրտեղից գրելը, ում յայտարարելը և որոնց ձեռքով փոխադրելը, այլ և իր կաշին փրկելու յոյսով՝ աւելացնում է այնպիսի տեղեկութիւններ, որոնցով թիւրք կառավարութիւնը անպատճառ պիտի շահագրգռուէր: Նա յայտնում է, որ նամակի մէջ ալի-նարկած անձնաւորութիւնները ուսասհայեր են, որոնք եկել են յատկապէս ուսումնասիրելու Ալիիկոյի դիրքերը և ժողովրդի ուղղական կարողութիւնը, որպէսզի տեղեկագիր ներկայացնեն. Արվիտում է գոյտով ինչ ունեցող յեղափոխական մարմինն, որի որոշման համեմատ՝ հարկաւոր եղած զէնք, մթերք ու պաշար պիտի մտնի Ալիիկոյ, հայ ժողովուրդը սպառնալիցներու համար թիւրք կառավարութեան դէմ: Նա յայտնում է, որ յիշած բոլոր ուսասհայերը ապրում են թիւրքից: Եւ որպէս ապացոյց իր ասածների նա մասնացոյց է անում մի Բօլքարի, ան ընդ Գիմարի Մարինով: Պօօօ, որ հէնց այդ միջոցին «գործաֆոն» գործիքով իր օրպահիկին է վատասկելիս եղել Այնթապում և մի Արացի, անունը Արտեմ Խաղիկով, որ Աուսական ապրանքներ է ծախելիս եղել Ալէքսանդրէտում:

Կասկածամիտ կառավարութիւնն էլ հէնց առիթ էր փրձարում՝ Ալիիկոյում ձերբակալութիւններ սկսելու համար: Իկոյն զբեր են ուղարկում Մարտից, Միսից և Հաճրնից՝ բռնելու: Չէյթունի գլխաւոր անցբերը: Ճանապարհորդներ բոլորն էլ քննութեան են ենթարկում: Սկսում է ամբողջ մի քաղաքական հետազոտ, շեռարդով Ալէքսանդրէտից պահանջում է խաղիկով, որ բարբախտաբար արդէն մեկնած է լինում: Այդ հանգամանքը աւելի խորհրդաւոր է դարձնում գործը: Հետադրով ձերբակալել են տալիս և Բօլքար Գիմարիին Այնթապում: Մինչև այդ ժամանակ արդէն ձերբակալած են լինում յիշած նամակը Ալէքսանդրէտից Չէյթուն փոխադրող կամ նրա հետ առնչութիւն

ունեցող 7 հայեր և մի քիւրդ: Գիմարիի մօտ ոչինչ չեն գտնում: Նա ինքը կասկածելի լինելու ոչ մի նշան չի ունենում: Կառավարութիւնը համոզուած է, որ այդ ամբողջ անասութիւնը յեղափոխք է, բայց ինչպէս դիւրութեամբ բաց թողնել մարդկանց, որոնք որչափ անմեղ են, նոյնչափ էլ կասկածելի կարող են լինել: Ինչպէս է լինում, որ Տիգրանը գիտէ այդ Բօլքարի գոյուլեան մասին, եթէ սա որեւէ կապ չէ ունեցել հայերի հետ: «Այստեղ երեի մի բան կայ՝ մտածում է թիւրքական «արդարագուտ» դատարանը և իբրև արդիւնք իր ենթադրութիւնների, դատարարում է Գիմարիին 5 տարւայ բանտարկութեան: Եթէ նա հայ ճանաչէր, և ուրեմն Տիգրանի ամբաստանութիւնը ճիշտ դուրս դար, անպատճառ մահաւան կը դատապարտուէր, Արացի Խաղիկովը ի բացակայութեան դատապարտեց մահաւան. նրա մասին կասկած է մնում, թէ թերևս հայ էր, ուրեմն և արժանի այդ պատժին: (Թիւրք դատարանները մահաւան են դատապարտում բոլոր այն քաղաքական ամբաստանելիներին, որոնք իր ձեռքը չեն անցնում, ենթադրելով որ փոխուստն արդէն ապացոյց է յանցանքի): Չերբակալուածներից միայն մարտիցի Արա-Գեաւորեան: Արթիւնն ու իր հովիւ՝ քիւրդ Օղեսայի կարտեցի, և այն՝ 150 սակի կաշաւքով: Միւսները՝ Չուգ-Մարզանցի Պօլսու թղլեան, մարտիցիներ՝ Նալպարէթ, իր հօրեղբօր որդի Նուբեպան Միկոյից և մարտիցի Մարգիտ Աւաքեղեան (սա նոյնպէս թակարդն ընկնելով փաշայի խոստումներից, ամբաստանել էր վերջ յիշած Պօլսու թղլեանին, որ բոլորովին կապ չէ ունեցել նամակի խնդրի հետ), դատապարտեցան 5-ական տարւայ և Նուբեպան Կալիթ մի տարւայ բանտարկութեան: Իսկ ամբողջ դեպքի տխուր հետքն ու Տիգրան դատապարտեց մահաւան: Բոլոր դատապարտուածները այժմ երբևէ չեն բացի թուրքական արարածից, որ երազում էր ուրիշներին, նոյնիսկ օտարականներին, կառավարութեան յանձնելով՝ փրկել իր կաշին:

Եւ դա է ու կը լինի վիճակը այն բոլոր տխմարների, որոնք խաբւած կառավարութեան նենգ խոստումներից, կը փորձեն իրենց փրկութիւնն ու շահը արբիշների կորուստի մէջ սրտնել...

Կաշատն անպատճառ թիւրք մինչև վերջին շունչ և ոչ երբեք խոստովանութիւն: Այս պիտի լինի նշանաբանը բոլոր քաղաքական կալանաւորների, հաւատաւորը ամեն մի յեղափոխական ձերբակալածի: Ոչ մի զիջում, ոչ սպառնալիքների և ոչ խոստումների դիմաց: Այդ է պահանջը թէ՛ գործի և թէ՛ նոյնիսկ բանտարկեալի շահը:

ՄԱՐ

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

Վերջին հեռագրերը՝ ուղղած եւրոպական մամուլին, յունիսի 23-ից. «Շուշու շրջակայքում զօրքը ուժեղացնում է դիւրբերը—Բալխանի և Բիբի-Էյբաթ յայտարարեց գործադուր Վորձաղուլ սկսեց Բաթմայիսի երկաթուղային գծի վրայ:—Թիփլիսում անապահարութիւնը կատարեալ է»:

Մայիս 10-ին Էջմիածնում լայն տեսակ կաթողիկոսական մի կարևոր կոնգրես, ուղղած բոլոր ուսասհայերին, հետեւեալ բովանդակութեամբ.

«Հայրապետական գահ բարձրանալու աստիճանի իսկ օրե-

* 5 սարին լրացնելուց յետոյ էլ այդ օտարականի չի ազատում բանակին կիսմիջ: Հինգ-վեց ամիս եւս ձգձուգուի և պահում են նրան գանդակում բանտարում—Մարտ, Այնթապ, Գիլիս, Հայկ, Ալի-տանդրէս և այլա նախկանական հսկողութեամբ ուղարկում: Պօլսու: Բարբախտաբար, բիւրական ցուրտը չի լինելու. պատճառով, նա ուղարկւում է աւստրիական ցուրտ: Նալի մէջ նա կարողանում է ցուրտպէսին հասկացնել իր դուրսից և նալից չի դուրս գալիս: Թիւրք կառավարութիւնը պատճառում է աւստրիական դեպիտացի. սա էլ ինդիսր հասկանալով, վիճում է չը յանձնել: Այսպիսով պատճառով միայն՝ օտար մի նալի ապաստանելով՝ բանտարկեալը ազատում է:

րից՝ Մենք փափագում էինք վերականգնել Հայաստան-եայց եկեղեցու դարերի ընթացքում սրբութեամբ պահպանված իրաւունքը՝ պաշտօնեաների վերաբերմամբ, սակայն ժամանակի ձախորդ հանգամանքները արգելք հանդիսացան Մեր այդ մտադրութեան իրականացմանը և մեր իղձը ամբողջ 13 տարի մնաց անկատար։ Այժմ, որպէս Հայրապետ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու և ամենամեծ պատուխանատու նրա ցանկալի բարգաւաճման և ծաղկեալ վիճակի թէ Մեզ ընտրող հայ ազգի և թէ՛ Աստուծոյ առաջ, հասած ենք համարում ժամանակը և հասուն Մեր ժողովուրդը, ուստի Մեր այս Հայրապետական Աօնդակով վերականգնելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու դարերով սրբագործված իրաւունքը՝ Քեզ ենք տալիս, ժողովուրդ Հայոց, թեմակալ առաջնորդների, յաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների ընտրութեան իրաւունքները, որից յետոյ ընտրեալները կը հրաւիրւին իրենց պաշտօնին պետութեան կողմից սահմանված օրինական ճանապարհով Ի նկատի առնելով հայ ազգաբնակչութեան վերաբերեալ վիճակագրական ճշգրիտ տեղեկութիւնների թերութիւնը, առայժմ՝ մինչև նրանց վերատուգումը և հայ ժողովուրդից ընտրեալ պատգամաւորների ժողովով հաստատուն կանոնադրութեան մշակումը, կարգադրում ենք ընտրութիւնները կատարել կաթողիկոսական ընտրութեան եղանակով ընդհանուր և անմիջական ձայնաւոյթեամբ՝։

Հաճոյքով իմացանք, որ Սասունի յայտնի գործիչ Մուրադ, որ 12 տարուց ի վեր աքսորված էր աֆրիկեան Տրիպոլի, կարողացել է ազատուել և այժմ դառնում է Պարիզ Յայտնում ենք մեր բերկրանքը և լիպոյս ենք, որ անւանի յեղափոխականը վերստին եւանդով կը ներքի ժողովրդական ազատութեան գործին, որ այնքան կարօտ է կարող և շիտակ մշակներին։

Մեզ հաղորդում են, որ Պարիզում կազմակերպւած է մի նոր մարմին՝ «Գրանս-Հայկական Աօմիտէ» անունով, որը նպատակ ունի ծառայել հայոց դատին։

Յունիսի 15-ին ժընեվի «Ազգինօ դը Մէնսիէր» դահլիճում, բազմամարդ մի ժողովի առաջ՝ հայկական սրբանոցների յայտնի խնամակալ Լէօպոլդ Գափր և Վանի ծանօթ միտիներ Գր. Բէյնօյզ դասախօսեցին Հայաստանում հիմնած սրբանոցների և թիւրքահայ ժողովուրդի ծանր վիճակի մասին։ Գասախօսներից առաջինը մանաւանդ մեծ գովեստով շեշտեց հայ ժողովուրդի քաղաքակրթական ճգնաժամները, բարոյական հոգեւորական և անասվոր տոկունութիւնը՝ քաղաքական կռիւ սուպերգրում։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԳ

Տ Ե Ր Ր Օ Ր

Վասպուրականի Կ. Կօմիտէի որոշմամբ տեղօրի կնիւթակեցաւ Բզնունեայ գաւառի (Ալճաւազ) Առէմ գիւղացի Մէլիք Յակոբ Թաւրաթեան, իբրև լրտես հիւսէյմ փաշայի քով, իբրև մատնիչ մեր հրկի ընկերակցութեան, որոնք հիւսէյիմ փաշայի հրամանով և թիւրքերու ձեռքով սպանեցան չարաչար տունջամբներով։

Տ. Յ. Դ.
ՎԱՍՊ. ԿՆՆՏ. ԿՕՄԻՏԷ

Վ. Ա. Ն. Ի Հ Ա Յ Հ Ա Ս Ս Ր Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն

- Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Վասպուրականի Կեդրոնական Կօմիտէն կը հրահանգէ՝
- 1) Ոչ ոք չհամարձակուի զբաղվիլ դաւաճանութեամբ, մատնութեամբ և լրտեսութեամբ. թող զգուշաման ժամանակի ընթացքում մոյն գործերով կասկածելի երևցածները։
 - 2) Ոչ ոք չհամարձակուի այսուհետև զիշերային յարաբերութիւններ ունենալ թիւրք պաշտօնեաներու հետ. հակառակ պարագային անոնք պիտի նկատուին իբր կասկածելի անձեր։
 - 3) Ոչ ոք չհամարձակուի այսուհետև լոկ սին հետաքրքրութեան կամ կասկածելի մպատակներու համար՝ տեղեկութիւններ հաւաքել յեղափոխական անձնաւորութիւններու և գործերու մասին։
 - 4) Ոչ ոք չհամարձակուի կազմակերպութեան կնիւթ կեղծել ու կնքած մամակներով սուլառնալիքներ կարողալ կամ պահանջներ ընել։
 - 5) Ոչ ոք չհամարձակուի անհատական հաշիւներով տէրրօրներ կատարել՝ կարծելով թէ կազմակերպութեան կատարած տէրրօրների շարքին կրնան անցնել և թող իւրաքանչիւր հայ զգուշամայ թիւրքերէն՝ մի գուցէ գաղտնի սպանութիւններ պատահին և յետոյ մեր կազմակերպութեան վերագրուին։
 - 6) Ոչ ոք չհամարձակուի գաղտնի կամ յայտնի ունէ գէնք և փամփուշտ ծախել թիւրքի կամ քրկրտի։
 - 7) Ոչ ոք չհամարձակուի այսուհետև (մեծ առևտրական լինել, թէ վրոքը) հասարակութեան դրամները գաղելով՝ կեղծ սնանկութիւն հրատարակել։
 - 8) Ոչ ոք չհամարձակուի վաշխառութեամբ զլուղացիներու կամ առհասարակ աղքատ ժողովուրդի հողեր, կալածներ կամ գոյքեր բռնի գրաւել՝ թշաւութեան մատնելով անոնք։
 - 9) Ոչ ոք չհամարձակուի կեղծ դրամ կտրել և ցրել հասարակութեան մէջ մանաւանդ կազմակերպութեան անունով։
- Այս հրահանգները չլսող ու չկատարողները թող վրտատան լինին, որ իրենց ոչ մէկ քայլը չպիտի վրիպի կազմակերպութեան ուշադրութեան և թող հաւատացած լինին, որ կազմակերպութիւնը իրենց դէմ ձեռք պիտի առնէ ամենակտրուկ միջոցներ և գործադրէ ամենախիտ սուտիներ, կանգ չառնելով մաս մահաւան պատմի առաջ։
- 1906, մարտ Տ. Յ. Դ.
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵՒ. ԿՕՄԻՏԷ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Արեւմտեան Ռիւսի ստացած է՝

Դերմանիս.—Իերլիի հայ ուսանող. երկրորդի հասոյթից մցայորդ՝ (140 մարկ) 172 ժր։

Ռուսական—Պրախայի երկրօրիսէլէն 653. Քրանկ 45, սան. հաւանսա հեհեհեալ կերպով՝ Մեհարանի հասոյթ 444. 45, և Երիտմիսա 20, հեհեհեալ խմբիէն, Առլիւմ 30, Տարոն 16, Կարմիր Լիւ 24, Հարաւային 18, Ագիլ 12, Անդրանիկ 30, Կուրգէն 24, Արարատ 24, Արագած 12։

Ինչ. գումար 825 ժր. 45 սան.։

Պաքստանի Կեդր. Կօմիտէն՝

Յիւլիոյի ԿՕՄԻՏԷՆ՝ Երկրայացմուն հասոյթ 301. 85 լէվ. Օր. կարմիր խաչի լ) սանեակ 13. 50, գ) սանեակ 12. 50, ս) սանեակ

18, Սուխ-Այծեամ խ. 17. 50, եւս 15, Արամեան խ. 62, Արեւելեան խ. 20, Տարօն խ. 23, եւս 24, եւս 29, Բաբելէն-Սիւնի խ. 51, Վասպուրական խ. 26, Վրէժ խ. ք) սառնակ 38, Վարդգէս խ. 19. 50, Ապէլ Թաթնուլ խ. 40, Տիկն. Շաֆէ խ. 111. 50, Վազգին խ. 28, եւս 29, Գր. Միլայեան խ. 9, Թ. Բազարեանի ձեղայի խ. 9, 50, Պեակի հասոյթ 15. 20, Սգանանդեան հասոյթ 45. 65, Ա. Թորոսէն ի նպաստ բանաստեղծայնեան յի սրած երկայոյթի հասոյթ 309. 30: Գումար 1268 ըլլ:

Նոյն կովիստի հանգանակութեան 20 Ժամբ, Սուր-Թուր 20, քիւ 16505՝ 20, քիւ 16512՝ 10, քիւ 16347՝ 125, քիւ 16352՝ 200, քիւ 16354՝ 50, քիւ 16337՝ 150, խաչիկ 100, քիւ 16363՝ 200, քիւ 16492՝ 10, լեկ, Մլրատ 10 քիւ 16493՝ 10, քիւ 16485՝ 4, 16496 5, Կայծակ 2, քիւ 16498՝ 10, քիւ 16499՝ 10, խաչ 2, քիւ 16501՝ 2, Վարդապետ 5, Կանեմեան 3, քիւ 16504՝ 10, քիւ 16506 2, քիւ 16507՝ 5, Ջամբ 20, ոմն 10, Դարանախի 30, քիւ 16511՝ 30, քիւ 16513՝ 15, քիւ 16346՝ 150, քիւ 16348՝ 40, քիւ 16349՝ 70, քիւ 16350՝ 60, քիւ 16351՝ 10, քիւ 16355՝ 100, քիւ 16356՝ 40, քիւ 16359՝ 5, քիւ 16360՝ 5, Ե. Ս. Բ. 100, Արծիւ 5, քիւ 11218՝ 5, քիւ 11219 30, Սեւ հողեր 16, քիւ 16353՝ 70, Սողոմոն 20, Մատր. Հիւնդեան 5, Հեքուր-Դակիկ խ. 107. 20, Հրայր խ. 44, Յ. Գ. 5, Գ. Կ. 2, Կ. Յարութիւնեան 3, Տիկն. Ե. Յարութիւնեան 5, Յ. Պողոսեան 5, Տիկն. Հ. Յովնանեան 5, Օր. Սէլվէ Յովնանեան 3, Թ. Բազարեանի ձեղայի խ. 10, Թ. Հն. Նիկողոսեան 5, Հայ 1, Յար. Աբրահամեան 2, Թ. Հն. Ներսիսեան 10, Կ. Հն. Արքիմեան 10, Բոլոնիակի Նեոմ 2, Ս. Յակոբեան 2, Ն. Մելիքեան 3, Գ. Միլայեան 2, Պ. Ե. Դ. Եկիմելեան 2, Պ. Հն. Յարութիւնեան 3, Ս. Գազարեան 2, Յով. Փափագեան 2, Կ. խաչուհեան 4, Պ. Յակոբեան 3, Ս. Հն. Նիկողոսեան 4, Յովն. Հն. Նիկողոսեան 5, Հայ 2, Նորայր 5, Յ. Ժիրայր 5, ոմն 5 Ժր., Ա. Եկիմելեան 3, Պարսիզեան 5, Պորթալիքստէն՝ Յ. Ս. Գ. 15, Ազգասէր ոմն 15, Ազգասիր ոմն 5, Աննաօր 5, Ազգասիր սր 10, Գ. Սեմեմբիւնեան 7, Ս. Սիրսչեան 2, Յ. Մարտիրոսեան 3, Կ. Պեռոսեան 4, Ս. Կարապետեան 3, Խ. Կարապետեան 5, Ս. Այրաւեան 4, Փ. Յովնանեան 6, Փ. Թաղութեան 5, Ս. Մամասեան 2, Ս. Պեռոսեան 4, Ս. Յովնանիսեան 2, Ա. Վարդանեան 3, Յ. Առաքելեան 1, Բոլէ Նեոմ 1, Պ. Վարդեան 3, Ս. Յովնանիսեան 1, Կ. Կարապետեան 4, Ս. Մելիքեան 0. 50, Ս. Մարգարեան 1, Գ. Պեռոսեան 1, Ս. Պաղտ. 2, Կ. Շահիբեան 1, Բլեւեակեան՝ Ս. Գեորգեան 2: Գումար 900 Ժր. և 1314. 70 լեկ:

ՍՈՅՈՒՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆ՝ Անդրանիկ խ. 26 լեկ, եւս 22, Սերոբ-Աղբիւր խ. 78, եւս 58, Հրայր խ. 30, Թ. Ջարմեան խ. 56, Բրիտասափոր խ. 24, Տիկն Սուխ խ. 144, Սեպուհ խ. 128, Անդրանիկ խ. 23, Կիրակոս Սիմոնիսի նւեր 20, Ս. Վարդան նւեր 5: Գումար 614 լեկ:

Նոյն երակովիստի հանգանակութեան՝ Ն. Համ. 5, Ս. Բրէս 5, Թ. Ջաթ. 2, Եղբ. Թագ. 5, Եղբ. Դրիգոր 10, Ս. Վարդ 20, Օրս. 5, ոսկերիչ Կեն 10, Սէն Գրիգոր 5, Ալեար 300, Ա. Գ. 5, Տնն Թագ. 5, Մանուէակ 10, Գալժա 5, Սէ. Համբ. 20, Միլիպար 10, Եղբ. Գանիւլ 10, Յովնան 2, Եղբ. Միլիպար 7, Եղբ. Պեռոս 10, Ասանկ 150, Ս. Սրմաճիկ 5, Սանտո 100, Համայ 20, Սէն Հի 60, Սէն Արծ. 20 Սուրբեան 40. 40, Նազար Նուրե 3, Գալուս 5, Սլայ 4, Սէ. Դրիգոր 2, Խէ Սիմ. 4, Ալեքսեանի 10, Սէնբէ: 4, Կեն Նուր 2, Գիւլ. Հի 20, Թոն իկ 20, Առաչեաց 20, Կասակ 60. 60: Գումար 1001 լեկ:

ԸՆԴՈՒՆԻ ԿՈՄԻՏԵՆ՝ Նեսեակ խմբերից՝ Պեռո 72, Տեռոր 40, Մանուէլեան 40, Բաբելէն-Սիւնի 35, Հրայր 25, Շաֆէ 29, Թաթնուլ Մալարացի 23. 50, Վրէժ 20, Բաւո 16. Շիբոպի Կայծակ 20, Առիւծ 15, Վասուլ 14: Գումար 349. 50 լեկ:

Ծ ա ն ո ր. Նոյն կով-ի հանգանակութեան մանրամասնութիւնը լայնորով:

ՎԱՐՆԱԻ ԿՈՄԻՏԵՆ՝ Նեսեակ խմբերից Կարմիր խաչի Արամ 296. 40, լեկ, Կարմ. խաչի Սուէ 27. 40, Կարմիր խաչի Բրիտասափոր 53. 05, Հայրիկ 43, Առիւծ 17, Կուկուսեան 28, Յաւազայիմական 28, Վրէժ 24, Հրայր 16, Տարօն 43, Ռեզունեաց 27, Ապարաւ 47. 50, Բողո՛ 22, գումար 672. 35, լեկ:

Նոյն կովիստի հանգանակութեան՝ Օ. Ն. 20 լեկ, Երկաթ 100, Շամակ 50, Վրէժ 100, Յ. Թ. 200, Յոմեղ 30, Մանեսի 50, Ս. Գ. 40, Սար 50, Արամ 50, Լոյս 100, Վանառական 50, Տակառ 150, եւս 150, Յ. Հ. Ա. 10, Անաչառ 20, Կայծակ 15, Տ. Իսխան 10, Թլուչուն 20, Գ. Չ. 80, Հայրոյի 30, Նիխ. Ս. 10. Նանայ 7, Խենդ 10, Լուրբայ 15, Նոն 5, Հայեղի 15, Գ. Յակոբեան 2, Միլես 2, Օսիկեան 5, Օլիս 2, Յ. Մեղաղ 2, Յ. Գեորգեան 10, Գ. Նանեսան 2, Ս. Մելիքեան 10, Կուրիկ 10, Վարդան 1. Միլայեան 1, Աբրահամեան 5 Ս. Օնանդեան 2, Ս. Անէմ 5, Գ. Մարտիրոսեան 1. 50, Կար-Հանիդուր 5, Տոլարեան 4, Պողոս Պեռոսեան 4, Ս. Կիւմիւզեան 2, Ս. Վերոսեան

5, Պ. Նիկողոսեան 2, Տէրմէնի 3, Արեակաւան 5, Յ. Սէիսեան 10, Սահակեան 5, Թ. Մ. Յակոբեան 2, Թաղեոս 2, Բեսայ 2, Օ. Բարսէղ 2, Եփրասսարան 5, Կալպէ 3, Թորոս աղայ 2, Կ. Պաղղասար 3, Ս. Ղ. 5, Տ. Անէմ 3, Ս. Աասուր 5, Ռէս 5, Ս. Աղ. 5, Պողոս Պ. 3, Մ. Յոն 3, Մ. Յարութիւն 5, Պ. Տ. Յ. 3, Մլրատի կառուարան 5, Ապուր 3, Մանուկ Յ. 3, Մաս 3, Կայծակ 5, Ալքուն 5, Մատուկ 2. Կոսի 2, Տալօ 5, Գեորգ չոպան 3, Գ. Միլայեան 5, Կանչո 3, Փառունակ 5, Աւո աւելի 4, Ռեզունի 10, Գալուս կոչակար 3, Ղ. Առաքելեան 5, Զուլիչ 4, Մ. Վարդանեան 3, Տ. Վ. Բ. 3, Ամիրխանեան 3, Ա. Ամիր 5, Ջամբար 5, Առօ փ. 5, Նաչօ Վ. 5, Ապուխս ձախ. 5, Ծաղիկ 5, Շահին 5, Ծաղիկեան 5, Մ. Գեորգ 5, Գ. Սահակ 5, Տ. Գեորգեան 5, Մ. Բանանայ 5, Ո. Կ. 5, Սալուն 5, Խիզան 5, Գ. Սարգիս 10, Պ. Օսկան 2, Ժոզիդար 3, Նառախոյ 5, Յ. Պ. 5, Ն. խաչիկեան 3, Ա. Գ. 5, Աբրահամ Տ. 2. Բ. Գրիգորեան 5, Ա. Ժիրայր 2. Լազ. 3, Պ. խ. 2, Ս. Մարգար 2, Կ. Մ. 2, Օ. Մ. 2, Յ. Ա. . Տ, Յուսիմ 2, Միլայ 5, Բրուդ 2, Ս. Ավեսա 2, Մ. Վարդան 2, Ա. Մարգար 3, Մ. Կարեմ 2, Թիլմէնիկեան 5, Տ. Նոնարար 5, Ս. Բարսէղեան 3, Տ. Նէլեան 2, Անէմեան 2, Դարազաւ 2, Գայրէք 2, Հն. կոչակար 3, Գ. Արամեան 2, Պ. Ղ. 2, Ն. Պէլիկեան 3, Ս. Պապիկեան 2, Օ. Ա. 10, Կ. Բեւրէկ 3, Շէքի 3, Ե. Լեւոնեան 5, Ամբիկ 5, Յակոբ ձալակաւան 5, Կալիկի Գասպար 2, Ս. Ղազարեան 2, Ե. Պողանի 2, Մ. Պողոսեան 2, Մ. Մուրադեան 2, Աննուէր 3, Թ. Սարգիսեան 2, Թաւսո 2, Ղօզանեան 2, Ջանազաններէ 26. 60, Փալարայկա 5, Ալլան 5: Գումար 1900 ըլլ:

ՊՈՒՐԿԱԶԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆ՝ Նեսեակ խմբերից Սասուն 72, Արամ 57, Արսօ 34, Եփրատ 54, Գումար Գարե՛ 26, Աղբար 12, Օնանդակ 55. 90: Գումար 310. 90 լեկ:

ՍԻԼՎԵՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆ՝ Նւեր Ա. Սերոբեան 20. 20, լեկ նեսեակ խմբերից Սրբալու կայարանի Սերոբ-Աղբիւր 40. 20, եւս 30, եւս 40, եւս 31, եւս 31, Արապ 20. 20, եւս 20. 20, Բասնէ Մանլէի զաննանակէն 22, Ազաս 70. 70, եւս 23. 50, Գրայս 40, եւս 40, եւս 40. 40, Ազաս 32, Գարնապաթ կայարանի Հրայր 22, եւս 24. 50, Սլօպէլօ կայարանի Արծիւ 20. 20, Գարաբունար կայարանի Պեռո 33, եւս 20. 30, եւս 40, եւս 40, Սերոբ 15, Բէրմէլի կայարանի Անդրանիկ 20. 30, եւս 17, Սիլիկեան թաղախի Անդրանիկ 21. 60, եւս 28. 60, Շանթ 5 10, Բրիտասափոր 19, եւս 24. 60, Սիրմեան 14. 30 եւս 13. 50, Վասպուրական 24. 45, եւս 24. 85, Եանջօլ խաչախի Կայծակ 57, Անդրանիկ ընթերցարանի հասոյթ 33. 65, լեկ: Գումար 1040. 05 լեկ:

ՊՐԻՍԻՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆ՝ Սրբալու կայարանի հասոյթ 500 լեկ, Տարօն խ. 42, Եղբ. Սիլիկեան լէն 5, Տրամ 4, Դանուր 20, Վարդ 5, Հայրուկ 5, Վիժ 5, Յոլակ 3, Նան 5, Արղար 5, Պարոյր 5, Թափառական 15, Երանմէ 5, Ջալաջի 10, Արամանի 10, Հողազոր 20, Նորել 5, Արիւնոս դանակ 5, Բաժժի 2: Գումար 676 Ժամբ:

ՊՈՒՐԿԱԶԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆ՝ Հեսեակ խմբերից Անդրանիկ 54 լեկ Վազգէն 39, Արեւմեան 69, Յեղայի 42, Կայծ 42, Չեքուն 40, Նեկուրու 48, Տիկն Շաֆէ 48, Տիկն Արամ 42: Գումար 424 Ժամբ:

ՎԱՆՈՒՄ ԿՈՄԻՏԵՆ՝ Արարատ ընթերց. հասոյթ 240. 10 Ժամբ Տիկն. Կարմիր խաչի զաննանակէն 134, Գ. Արամ 33, Գ. Գայլ 21, Գ. Արարատ 42, Յեղայի 30, Չիմաստ 19, Կարին 21. Սերոբ-Աղբիւր 24, Նոր դար 45, Ներոն 22, Վարազ 52, Տարօն 33, Հագուլ 23, Տիկն Արամ 40, Նոր դար խմբի անդամ Պարսեի անապարա 36, Ներոն խ-ի անդամ Գրգուրէն Չ, Հագուլ խմբի անդ. Ակներեան 3, Նոր դար խմբի անդամ Գրգուրեան նւեր 5, Ա. Մանուկեան 6, նւեր 15. 35, ձալաւան պատկերի արժէք 22: Գումար 862. 45 Ժամբ:
Ընդամուտ գումար 2862. 45 Ժր. և 8470 լեկ և 50 սանս:

Մ ա մ ո լ լ ի տ ա կ ե ն ն

Հ. Յ. Գ. Հրատարակութիւն

1. ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄՏԳԵՐ

Քր. Միլայեանի:

2. ՍԱՍՈՒՆ-ՄՈՒԾԻ ԿՈՒՆՆԵՐԸ 1904-ին

Հրայրի և Վահանի պատկերով և Սասունի բարեկրօն:

Առաջին գիրք.	1 ֆր. —
Երկրորդին.	— 50 սանս